

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ
(ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ

ԵՐԵՎԱՆ 2004

Սույն փաստաթուղթը << կրթության և գիտության նախարարության համար մշակել է Arcadis BMB (www.bmb.nl) Consultants ընկերության ղեկավարած խումբը՝ TACIS-ի 2003/69090 «Օժանդակություն մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումների իրականացման ռազմավարության և իրավական դաշտի մշակմանը» Եվրոպական Հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում:

Ռազմավարությունը ստացել է << կառավարության հավանությունը 2004 թվականի մայիսի 6-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
2. ՄԻԶԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻ ՎԻճԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	5
2.1. Նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգի ընդհանուր նկարագիրը	5
2.2. Նախնական և միջին մասնագիտական կրթության իրականացումը	7
2.3. Նախնական և միջին մասնագիտական կրթության կառավարումը	10
2.4. Նախնական և միջին մասնագիտական կրթության ֆինանսավորումը	10
3. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻԶԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ	12
4. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ	15
1. Բաց և ժողովրդավարական համակարգ	15
2. Կրթության շարունակականություն	16
3. Կրթական ծառայությունների մատուցման որակը	18
4. Հմտությունների ապահովում՝ ըստ անհատական կարողությունների	21
5. Հմտությունների ապահովում՝ ըստ տնտեսության և աշխատանքի շուկայի կարիքների	23
6. Ծախսերի արդյունավետություն	26
7. ՄԿՈՒ տարբեր ձևերի ներառումը միասնական օրենսդրական շրջանակում	29
8. Մասնագիտական ուսումնական հսատատությունների կառավարման և ղեկավարման ռացիոնալացում	31

9. Սոցիալական գործընկերություն	33
10.Թափանցիկություն և հավատարմագրում	35
11.Ինտեգրում կրթության բնագավառում միջազգային զարգացուներին	37
12.Ուսուցում ողջ կյանքի ընթացքում	39
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀՀ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ	
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	42
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀՀ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ	
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ	46
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՀՀ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐԴԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ)	
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ	54
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՀՀ ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ	
ՀԵՏԱԳԾԵՐԸ	63

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի նախնական (արհեստագործական) ու միջին մասնագիտական կրթության և ուսուցման (այսուհետև՝ ՄԿՈՒ) ռազմավարության նախագիծը մշակվել է հայաստանյան և միջազգային փորձագետների միացյալ ուժերով։ Սույն փաստաթուղթը ներկայացնում է ՄԿՈՒ բարեփոխման սկզբունքները և առաջարկում դրա կարևորագույն ոլորտներն ու հիմնահարցերը։ Այն հիմնված է Հայաստանի պայմաններում կիրառելի միջազգային փորձի վրա և ավելի գործնական դարձնելու համար կարիք ունի օրենսդրական ապահովման։

Ռազմավարությունը մշակելիս հաշվի են առնվել դրա դրույթները սահմանադրական ակտերին, երկրի ընդհանուր կրթական քաղաքականությանը, սոցիալ-տնտեսական զարգացման ազգային ծրագրին ու գերակայություններին հանապատասխանեցնելու վերաբերյալ պահանջը։

Ռազմավարությունը հիմնված է հետևյալ նույնացումները վրա։

- Երկարաժամկետ հեռանկարի (6-10 տարի) սահմանում, որը դերերի և իրավասությունների վերասահմանման հետևանքով կապահովի արդյունքների հասնելու բավարար ժամանակ, ինչպես նաև կոյուրինացնի հետագայում ռազմավարության մեջ անհրաժեշտ որևէ փոփոխության կատարումը։
- Իրատեսական նպատակների սահմանում և դրանք իրականացնելու որոշակի ուղիների նախանշում։

Ռազմավարության մշակման բոլոր փուլերում հնարավորինս լայնորեն ընդգրկվել են շահագրգիռ կողմերը և նրանց հետ իրականացվել են լայնածավալ քննարկումներ, խորհրդատվություններ։

2. ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻԶԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՏԱՆՈՒՄ

Հայաստանում կրթության տարբեր աստիճաններն իրականացվում են կրթական տարբեր ծրագրերի միջոցով: Կրթական ծրագրը սահմանում է որոշակի մակարդակի և ուղղվածության կրթության բովանդակությունը, անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ծավալը:

«Կրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է Հայաստանում իրականացվող հետևյալ կրթական ծրագրերը՝

1. հանրակրթական ծրագրեր (հիմնական և լրացուցիչ),
2. մասնագիտական կրթական ծրագրեր (հիմնական և լրացուցիչ):

2.1. Նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգի ընդիանուր նկարագիրը

Մասնագիտական կրթական ծրագրերը նպատակառուղղված են կրթության հանրակրթական և մասնագիտական մակարդակների հաջորդականության միջոցով համապատասխան որակավորման մասնագետների պատրաստմանը, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, գիտելիքների ծավալի ընդլայնմանն ու որակավորման բարձրացմանը:

Մասնագիտական հիմնական կրթական ծրագրերն են՝

1. նախնական մասնագիտական (արհեստագործական)՝
2. միջին մասնագիտական.
3. բարձրագույն մասնագիտական.
4. հետքուհական մասնագիտական:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության նպատակը հիմնական ընդիանուր կրթության հիմքի վրա նախնական մասնագիտական՝ արհեստագործի որակավորմամբ կադրերի պատրաստումն է:

Նախնական մասնագիտական կրթությունը կարող է իրականացվել նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ արհեստագործական ուսումնարաններում, կազմակերպությունների ուսումնական կենտրոններում, ինչպես նաև միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Մինչև 2001 թվականը նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությունը (նախկինում՝ մասնագիտական-տեխնիկական կրթություն) իրականացվում էր մասնագիտական-տեխնիկական ուսումնարաններում (ՄՏՈՒ): 2001 թվականին Հայստանում առկա էր 58 ՄՏՈՒ, որոնցից 19-ը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության, իսկ 39-ը՝ ՀՀ մարզպետարանների (այդ թվում նաև Երևանի քաղաքապետարանի) ենթակայության ներքո:

Սակայն, քանի որ 1999 թվականին ընդունված «Կրթության մասին» ՀՀ օրենքով ՄՏՈՒ-ն՝ որպես ուսումնական հաստատության առանձին տիպ այլևս նախատեսված չէր, ՀՀ կառավարության կողմից հաստատված՝ Հայաստանի Հանրապետության նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգի ռացիոնալացման ծրագրի շրջանակներում Հայստանում գործող ՄՏՈՒ-ները վերակազմակերպվեցին՝ վերակազմավորվելով արհեստագործական հոսքով ավագ դպրոցների (45 ՄՏՈՒ), միացվելով միջին

մասնագիտական ուսումնական հաստատությունների (9 ՄՏԾՒ), կամ լուծարվեցին (4 ՄՏԾՒ):

Ներկայումս նախնական մասնագիտական կրթություն իրականացվում է 10-12 ՄՄԸՆՀ-ում:

Միջին մասնագիտական կրթության նպատակը միջին մասնագիտական որակավորմամբ կաղրերի պատրաստումը, միջնակարգ (լոիկ) ընդհանուր կրթության հիմքի վրա ընդհանուր և մասնագիտական գիտելիքների ընդլայնումն ու խորացումն է:


Միջին մասնագիտական կրթությունն իրականացվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ քոլեջներում և ուսումնարաններում: Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ավարտական ատեստավորումն անցած շրջանավարտներին շնորհվում է միջին մասնագիտական՝ կրտսեր մասնագետի որակավորում:

Ներկայումս Յայաստանում գործում է 80 միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություն, որոնց ցանկը բերված է հավելված 1-ում:

2002 թվականին ՀՀ պետական ՄՄԸՆՀ-ներում սովորում էր 29310 ուսանող, որոնցից 19348-ը կամ 66.0%-ը կանայք էին : 22268-ը կամ 76.0%-ը սովորում էին վճարովի հիմունքով:


Ոչ պետական ՄՄԸՆՀ-ներում, որոնք 22-ն են, սովորողների թիվը կազմում էր 1747 հոգի, որոնցից 1268-ը կամ 72.6%-ը կանայք էին:

Ներկայումս միջին մասնագիտական կրթության համակարգում ընդգրկված է բնակչության 0.29%-ը: Առավելագույն ցուցանիշը գրանցվել է 1980 թվականին՝



0.52%, իսկ 1965 թվականից հետո նվազագույնը գրանցվել է 1995 թվականին՝ 0.21%: Նախնական մասնագիտական կրթության համակարգում ընդգրկված է բնակչության 0.11%-ը, որը համընկնում է այդ համակարգի առաջին հաստատությունների ստեղծման տարվա՝ 1936 թվականի ցուցանիշի հետ: Առավելագույն ցուցանիշն այստեղ նույնպես գրանցվել է 1980 թվականին՝ 1.73%:

Վերջին տարիներին առկա է միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դիմորդների թվի աճնան որոշակի միտում: Ստորև բերված գծապատկերը ներկայացնում է ՀՀ կրթության և գիտության նախարարության ՄՍՈՒՀ-ների ընդունելության պատկերը 1991-2003 թվականների համար.



2.2. Նախնական և միջին մասնագիտական կրթության իրականացումը

Ուսուցումը մասնագիտական ուսումնական հաստատություններում իրականացվում է ինչպես անվճար, այնպես էլ վճարովի հիմունքներով: Վերջինս կիրառվում է 1992 թվականից:

Պետական հաստատությունների անվճար ուսուցման ընդունելության տեղերի թիվն ըստ մասնագիտությունների յուրաքանչյուր տարի հաստատում է ՀՀ կառավարությունը՝ ելնելով համապատասխան մասնագետների պահանջարկից և պետական բյուջեով մասնագիտական կրթության համար նախատեսված գումարների ծավալից: Ըստ մասնագիտությունների հաստատված տեղերը նախարարությունները բաշխում են ըստ իրենց ենթակայության հաստատությունների: Վճարովի ուսուցման ընդունելության տեղերի թիվն ըստ հաստատությունների և դրանց մասնագիտությունների սահմանում են համապատասխան նախարարությունները:


Ուսման վարձի չափը սահմանում են ուսումնական հաստատությունները: Այն կազմում է 60-ից մինչև 350 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ և կախված է մասնագիտությունից:

Մասնագիտական ուսումնական հաստատություններում ընդունելությունն իրականացվում է մրցութային հիմունքով: Անվճար ուսուցման յուրաքանչյուր մասնագիտության ընդունելության համար սահմանված են ընդունելության քննություններ՝ 2-4 առարկաներից:

2002 թվականին ՀՀ կառավարությունը հաստատել է միջին մասնագիտական կրթության, իսկ 2003 թվականին՝ նախնական մասնագիտական կրթության մասնագիտությունների նոր ցանկերը

(հավելվածներ 2 և 3), որոնք առավելագույնս պետք է համապատասխանեն Հայաստանի տնտեսության պահանջներին, նրա ուղղվածությանը և միաժամանակ բավարարեն այլ պետություններում (առաջին հերթին ԱՊՀ երկրներում) գործող մասնագիտությունների հետ համադրելիության պահանջը՝ պատրաստվող մասնագետների վկայականների և որակավորումների փոխադարձ ճանաչման ապահովման նպատակով:

Ուսուցումը և ախնական և Միջին մասնագիտական հաստատություններում իրականացվում է մասնագիտությունների ուսումնական պլաններով, որոնք իրենց մեջ ներառում են ուսուցանվելիք առարկաների ցանկը, դրանցից յուրաքանչյուրի համար նախատեսված ժամաքանակը և բաշխումն ըստ կիսամյակների: Քանաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի, ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը, կրթության լիազորված պետական մարմնի հաստատած պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, մշակում և հաստատում են ուսումնական հաստատությունները:



Մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդում են հիմնականում բարձրագույն կրթությամբ մանկավարժներ: Ոչ բարձրագույն (միջին մասնագիտական) կրթությամբ դասատուները կազմում են ողջ համակարգի մանկավարժական համակազմի 3-4%-ը: 2001-2002 ուսումնական տարում մասնագիտական ուսումնական հաստատությունների մանկավարժների թիվը կազմել է 4210 հոգի, որից 3088-ը՝ հիմնական աշխատողներ են: Կանայք կազմում են անձնակազմի 73.8%-ը, ինչը հիմնականում պայմանավորված է տղամարդկանց համար անհրապույր վարձատրության պայմաններով: Մտահոգության տեղիք է տալիս նաև դասախոսների տարիքային կազմը: Միջին տարիքն այստեղ 55-ն է: Միջինում մեկ դասախոսին ընկնող ուսանողների թիվը կազմում է 7.0, ինչը ռացիոնալ հարաբերակցություն չէ:

Ուսումնառության ընթացքում հիմնականում շարունակում է գերիշխել տեսական ուսուցումը: Սովորաբար եռամսյա-քառամսյա տեսական ուսուցմանը հաջորդում է երկուսից չորս շաբաթ տևողությամբ գործնական ուսուցումը (պրակտիկան): Կիրառվում են պրակտիկայի հետևյալ տեսակները. ուսումնական

(իրականացվում է ուսումնական հաստատությունում), տեխնոլոգիական (իրականացվում է կազմակերպություններում), նախադիպլոմային (իրականացվում է ավարտական ատեստավորումից անմիջապես առաջ):

Ներկայումս արտադրության անկման, մասնագետների պահանջարկի կտրուկ նվազման և ձեռնարկությունների սեփականաշնորհման հետևանքով լուրջ դժվարություններ են առաջացել պրակտիկաների կազմակերպման գործում: Այդ իսկ պատճառով պրակտիկաները հաճախ թերի են իրականացվում, առանձին դեպքերում էլ կրում են ձևական բնույթ, ինչը խիստ բացասաբար է անդրադարձնում շրջանավարտների մասնագիտական որակավորման մակարդակի վրա:

Չնայած Հայաստանում մասնագիտական ուսումնական բոլոր հաստատություններն ունեն իրենց սեփական շենքերը, սակայն խիստ տարրեր է դրանց ապահովածությունը ուսումնանյութական բազայով՝ լաբորատոր և արհեստանոցային սարքերով ու սարքավորումներով, դիդակտիկ պարագաներով, ուսումնական և ուսումնամեթոդական գրականությամբ: Բացառությամբ մի քանի հումանիտար ուսումնական հաստատությունների, որոնք ապահովված են համեմատաբար ժամանակակից ուսումնական միջոցներով, մյուսները, հատկապես տեխնիկական ուղղվածության հաստատությունները, կահավորված են թե՛ ֆիզիկապես և թե՛ բարոյապես մաշված, ժամանակակից արտադրության և տեխնոլոգիաների պահանջներին բոլորովին չհամապատասխանող գույքով: Այն վերջին 15-20 տարվա ընթացքում չի նորացվել՝ հիմնականում ֆինանսական միջոցների բացակայության պատճառով: Հաստատությունների մեծ մասն ունի մեկ կամ երկու համակարգիչ, իսկ ինտերնետային կապ՝ միայն մի քանիսը:

Դասագրքային ապահովվածությունը նույնպես շարունակում է մնալ ծայրահեղ անբավարար, քանի որ վերջին ժամանակաշրջանում Հայաստանում մասնագիտական գրականություն գործնականում չի հրատարակվել, իսկ օտարերկրյա գրականության զանգվածային ձեռքբերումը հնարավոր չէ ֆինանսական միջոցների սղության, նաև անիմաստ է՝ ուսանողների՝ օտար լեզուների (բացի ռուսերենից) անբավարար իմացության պատճառներով:

Հայաստանում գոյություն չունեն բնակչության խոցելի խմբերի (հաշմանդամներ, սոցիալապես մերժվածներ և այլն) համար նախատեսված հատուկ կրթական կամ ուսուցման ծրագրեր: Օրենսդրությամբ միայն սահմանված է, որ հաշմանդամները, ծնողազուրկ երեխաները և զոհված զինծառայողների երեխաներն ու ամուսիններն օգտվում են պետական մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվելու արտոնություններից:

2.3. Նախնական և միջին մասնագիտական կրթության կառավարումը

Հյայաստանի Հանրապետությունում կրթության պետական կառավարման լիազորված մարմինը ՀՀ կրթության և գիտության նախարարությունն է: Սակայն ՀՀ մի շարք այլ նախարարություններ ևս իրենց ենթակայության տակ ունեն միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ:

**Միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների թիվը՝
ըստ ենթակայության**

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆԸ	ՄՄՈՒՅ-ՆԵՐԻ ԹԻՎԸ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	54
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	9
ՀՀ առողջապահության նախարարություն	11
ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	3
ՀՀ էներգետիկայի նախարարություն	1
ՀՀ կառավարության առընթեր ֆիզկուլտուրայի և սպորտի վարչություն	2
ԸՆԴԱՄԵՆՔ	80

Ուսումնական հաստատության անմիջական ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որը նշանակվում և ազատվում է ուսումնական հաստատության կանոնադրության համաձայն (պետական ուսումնական հաստատությունների ղեպջում՝ համապատասխան նախարարության կողմից):

Տարածքային ինքնակառավարման մարմիններին վերապահված չեն նախնական և միջին մասնագիտական կրթության բաղաքականության մշակման և իրականացման իրավունք:

Գործնականում բացակայում է մասնագիտական կողմնորոշման կազմակերպված համակարգը, չի գործում այդ խնդրի համար պատասխանատու որևէ մարմին: Ցուրաքանչյուր ուսումնական հաստատություն ինքնուրույն է իրականացնում այդ գործառույթը, որը, սակայն, իհմնավորված կողմնորոշման և խորհրդատվության բնույթ չի կրում: Որպես արդյունք հաշվի չեն առնվում տվյալ անհատի հակումներն ու ունակությունները, աշխատաշուկայում տիրող իրավիճակը՝ հնարավոր հետագա զբաղվածության ապահովման տեսանկյունից:

2.4. Նախնական և միջին մասնագիտական կրթության ֆինանսավորումը

Պետական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումը անվճար համակարգում ամբողջովին իրականացվում է պետական բյուջեից: Սակայն պետությունը գործնականում ապահովում է միայն պահպանման ծախսերը (մանկավարժների աշխատավարձ, կրթաթոշակ, որոշ կոմունալ ծախսեր) հոգալու համար: Ընդ որում այդ հատկացումները կատարվում են ելնելով միայն անվճար ուսուցման համակարգում սովորողների թվից:

Համակարգի զարգացման (շենքերի վերանորոգման, ժամանակակից գույքի և սարքավորումների ձեռքբերման, ղեկավարների և դասախոսների վերապատրաստման, նոր ուսումնամեթոդական գրականության, ուսումնական ձեռնարկների, դասագրքերի մշակման կամ ձեռքբերման և այլնի) համար

անհրաժեշտ ծախսերը թողնված են ուսումնական հաստատություններին և պետք է կատարվեն դրանց արտաբյուջետային միջոցների հաշվին: Դրանք, սակայն, նույնպես չնշին են և հիմնականում բավարարում են միայն աշխատավարձի վճարմանը:

2001/2002 ուսումնական տարում պետական ՄՄՈՒՅ-ների ընդհանուր ֆինանսական մուտքերը կազմել են 2175094 հազար դրամ, որը միջին հաշվով մեկ հաստատության համար կազմում է շուրջ 29 մլն. դրամ: Դրանից 1011967 հազար դրամը կամ 46.5%-ը՝ ստացվել է պետական բյուջեից (հանրապետության կրթության և գիտության բյուջեի շուրջ 4%-ը), 1117149 հազար դրամը կամ 51.4%-ը՝ ուսանողների ուսման վարձավճարներից, 45978 հազար դրամը կամ 2.1%-ը՝ այլ աղբյուրներից, այդ թվում նաև՝ հաստատությունների կողմից մատուցված տարբեր վճարովի ծառայութուններից ստացված գումարներից:

Համեմատության համար նշենք, որ ոչ պետական ՄՄՈՒՅ-ների նույն ժամանակաշրջանի մուտքերը կազմել են 113716 հազար դրամ կամ շուրջ 5 մլն. դրամ մեկ հաստատության հաշվով:

Վերջին տարիներին կրթության և գիտության բնագավառում ծախսվել է ՀՀ պետական բյուջեի շուրջ 11%, կամ ՀՆԱ-ի 2,7%: Այն ցածր է համաշխարհային միջինից (3,4%), միջին եկամուտ ունեցող երկրներից (3,0%), Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի և զարգացած երկրներից (5%):

Դրա հետ միասին Հայաստանը միջին և բարձրագույն մասնագիտական կրթության համար կատարած պետական ծախսումներով հետ է մնում նաև ցածր եկամուտներ ունեցող երկրներից: Եթե 1989թ. բարձրագույն կրթության համար պետական ծախսումները կազմել են ՀՆԱ-ի 0,9%, կամ պետական բյուջեի 1,3%, իսկ միջին մասնագիտական կրթության համար՝ ՀՆԱ-ի 0,4%, կամ պետքութեի 0,6%, ապա 2000թ. (2000 թվին կրթության տրված բյուջեն կազմել է ՀՆԱ-ի 2,63%) բարձրագույն կրթության համար ծախսվել է ՀՆԱ-ի 0,30%, կամ պետքութեի 1,14%, միջին մասնագիտական կրթության համար ՀՆԱ-ի 0,11%, կամ պետքութեի 0,4%, որը բավականին ցածր է համաշխարհային ցուցանիշներից, այն փոքր է նաև ցածր եկամուտով երկրների հետ համեմատած:

Պետական ՄՄՈՒՅ-ներում ֆինանսական միջոցների 47.0%-ը ծախսվել է աշխատավարձի, 16.9%-ը՝ պարտադիր սոցիալական ապահովագրական վճարումների, 12.3%-ը՝ կրթաթոշակի և միայն 5.2%-ը, որը միջին հաշվով մեկ հաստատության համար կազմում է մոտ 2300 ԱՄՆ դոլար՝ հիմնավերանորոգման, գույքի և սարքավորումների ձեռքբերման համար: Նման ֆինանսական միջոցների առկայության պայմաններում բնականաբար դժվար է ակնկալել հաստատությունների ուսումնանյութական բազայի նորացում, որը, ինչպես նշվեց, թե՛ ֆիզիկապես, թե՛ բարոյապես մաշված է և հիմնականում չի համապատասխանում օրվա պահանջներին:

3. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻԶԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1. Բարեփոխումների հիմնական նպատակները

Բարեփոխումների հիմնական նպատակներն են՝ Հայաստանում նախնական և միջին մասնագիտական կրթության ժողովրդավարական և արդյունավետ համակարգի ստեղծման միջոցով՝

- ապահովել որակյալ մասնագետների պատրաստումը, նրանց կարողությունների և հմտությունների կայացմանն ուղղված համակարգի արդյունավետությունը,
- ապահովել ազգի զարգացման նոր մակարդակ բերող ժամանակակից անհատի ու քաղաքացու ձևավորումը, հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրությունն ու զարգացումը, մրցունակությունը և սոցիալական համախմբվածությունը, որոնք կբերեն քաղաքական կայունության և ժողովրդավարության,
- բոլորի համար ապահովել ողջ կյանքի ընթացքում հաջողության հասնելու հնարավորություններ՝ հենվելով սովորողների անհատական կարողությունների և տնտեսության ու աշխատաշուկայի պահանջների համապատասխանեցման վրա:

3.2. Բարեփոխումների ռազմավարական խնդիրները

Հայաստանի ՄԿՈՒ համակարգի բարեփոխումների ռազմավարությունն առաջադրում է մի շարք խնդիրներ, որոնց լուծման արդյունքներն են լինելու՝

1. Բաց և ժողովրդավարական համակարգը, որն ապահովում է տարբեր սկզբնակետերից և (կամ) նախընթաց կրթության կամ աշխատանքային գործունեության ամենատարբեր փուլերից հետո այդ համակարգ մուտք գործելու հավասար մատչելիություն բոլոր քաղաքացիների համար՝ կախված անհատական բնութագրից: Այս սկզբունքը հավասարապես պետք է կիրառելի լինի նաև ՄԿՈՒ իրականացնող՝ նախապես հայտնի համապատասխան չափանիշներ բավարարող բոլոր կազմակերպությունների համար, անկախ դրանց իրավական կարգավիճակից և սեփականության ձևից:

2. Կրթության շարունակականությունը, որն անձին հնարավորություն կրնաների ապահովել կրթության շարունակելիություն՝ իր ցանկացած չափով: Այս նպատակով կրթական տարբեր մակարդակները (միջնակարգ, նախնական և միջին մասնագիտական, բարձրագույն) պետք է շաղկապված կերպով կապված լինեն միմյանց: Սա հատկապես վերաբերում է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական համակարգին:

3. Կրթական ծառայությունների մատուցման որակը, որի ապահովումը ենթադրում է նորագույն ընդհանուր գիտելիքները և գիտական նվաճումները, տեխնոլոգիական զարգացումները, մշակույթի և ուսուցման մեթոդներն իր մեջ ներառող մասնագիտական կրթություն և ուսուցում ապահովող համակարգի հիմնադրում: Դա պահանջում է ընդհանուր և մասնագիտական առարկաների ինտեգրում, մասնագիտական կրթական ազգային նոր ծրագիր (կրթական

չափորոշիչ), ժամանակակից սարքավորումների ձեռք բերում, համապատասխան ուսուցիչների ներգրավում, ուսուցանողների ուսուցման համակարգի գործարկում, գործնական ուսուցման (պրակտիկայի) կատարելագործում երկու ուղղություններով՝ ժամանակակից լաբորատորիաների ստեղծում, և առաջին հերթին՝ պրակտիկայի առանձին փուլերի կազմակերպում աշխատատեղերում:

4. Յմտությունների ապահովումը՝ ոստ անհատական կարողությունների, որի համար ՄԿՈՒ համակարգը պետք է առաջարկի ուսանողների անհատական հակումների ու կարողությունների վրա հիմնված կողմնորոշման և մոնիթորինգի (համապատասխանաբար՝ ընդունելությունից առաջ և ուսումնառության ընթացքում) նոր, առավել արդյունավետ միջոցներ և ընթացակարգեր: Սակայն, նկատի ունենալով ֆինանսական միջոցների սահմանափակությունը, անհրաժեշտ է համակարգի ռացիոնալացում՝ հաշվի առնելով աշխատանքային շուկայի պահանջներն ու ներդրումներ կատարելու հնարավորությունները:

5. Յմտությունների ապահովումը՝ ոստ տնտեսության և աշխատանքի շուկայի կարիքների, որի նախապայմանն է արտադրության անընդհատ փոփոխվող կարիքներին արագ արձագանքելու միջոցով զբաղվածության պահանջներին վերաբերող հարցերում առավել ճկում գործող ՄԿՈՒ համակարգը: Լավագույն համակցություն կստեղծվի՝ եթե օգտագործվի առկա ողջ տեղեկատվությունը և ազգային, տարածաշրջանային ու տեղական մակարդակներով աշխատանքի շուկայի ավելի ընդգրկուն ուսումնասիրությունը: Այն կիրականացվի մշտական (ինստիտուցիոնալ) հիմունքներով՝ բոլոր շահագրգիռ կողմերի ու սոցիալական գործընկերների մասնակցությամբ և համագործակցությամբ:

6. Ծախսերի արդյունավետությունը, որը պայմանավորված կլինի ֆինանսավորման առկա և պոտենցիալ աղբյուրների համադրությամբ: Այս նպատակով կներդրվի միավոր ներդրումից ստացված արդյունքի հաշվառման չափանիշների համակարգ: Արդյունավետության բարձրացման նպատակով կվերանայվի տարբեր համակարգերի կողմից նույն ծառայությունները մատուցելու ներկայիս մոտեցումը:

7. ՄԿՈՒ տարբեր ծեսերի ներառումը միասնական օրենսդրական շրջանակում, որը բխում է շահագրգիռ կողմերի պատասխանատվությունների սահմանման պահանջից և հանգեցնում է մասնագիտական կրթական գործունեության, սկզբնական ու շարունակական մասնագիտական պատրաստման տարբեր տեսակների ու դրանց փոխհարաբերությունների սահմանմանը մեկ միասնական իրավական շրջանակում: Տարբեր մարմինների ենթակայության տակ գործող ՄԿՈՒ համակարգի փոխարեն, առաջարկվում է իր տարածքային ճյուղերով ստեղծել ազգային նոր կառույց՝ մասնագիտական կրթության բոլոր գործառույթների արդյունավետ կոորդինացման համար: Ղեկավարվելով նույն սկզբունքով՝ առաջարկվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից համակարգվող մասնագիտական ուսուցման գործառույթների իրականացման համար հնարավորինս օգտագործել մասնագիտական կրթության համակարգի առկա ենթակառուցվածքը և մարդկային ռեսուրսները:

8. Մասնագիտական ուսումնական հաստատությունների կառավարման և դեկավարման ռացիոնալացում, որը կապահովի դրա արդյունավետությունն ու թափանցիկությունը՝ վստահություն ներշնչելով բոլոր մասնակիցներին: Անհրաժեշտ է վերանայել ուսումնական հաստատությունների դեկավարության նշանակման, ոլորտում որոշումների կայացման համակարգերը՝ միաժամանակ էապես բարելավելով բոլոր մակարդակների դեկավարների կառավարչական հմտությունները:

9. Սոցիալական գործընկերությունը, որը կղրսենորվի ՄԿՈՒ գրեթե բոլոր բաղադրիչների (համակարգի համակարգման կառուցվածք, հմտությունների և կարիքների բացահայտում, ուսումնական ծրագրի արդիականացում, հավատարմագրում, ֆինանսավորում և այլն) նշանակմանը և կիրականացվի երկարաժամկետ եռակողմ համագործակցության սկզբունքով՝ ուղղորդելով դեպի սոցիալական գործընկերների դերերի և պատասխանատվությունների վերանայում ու հստակեցում:

10. Թափանցիկությունը և հավատարմագրումը, որի հիմքն է ուսանողների, ծնողների, դասավանդողների և գործատուների համար հեշտ ընթացնելի համակարգի, որտեղ որոշումների ընդունման և գործընթացների պատճառաբանման պայմանները նախօրոք հայտնի են: Այս մոտեցմանը իրականացվող ուսանողների ատեստավորումը կարտահայտի կրթական ծրագրի մակարդակը և ուսանողի առաջադիմությունը՝ բերելով կրեդիտների փոխանցելիության սկզբունքի վրա հիմնված հավատարմագրման ազգային համակարգի ներդրմանը: Այն պետք է ներառի ոչ միայն պետության (ՀՀ կրթության և գիտության նախարարության), այլև սոցիալական գործընկերների, մասնավորապես՝ գործատուների ներկայացուցիչներին:

11. Ինտեգրումը կրթության բնագավառի միջազգային զարգացումներին, որի հիմքը կլինի հավատարմագրված որակավորումների համակարգը: Այն պետք է լինի ակներև ու հասկանալի՝ ապահովելու համար դրա համեմատելիությունն ու համադրելիությունը՝ միջազգայնորեն ընդունված ընթացակարգերին և պահանջներին:

12. Ուսուցումը ողջ կյանքի ընթացքում, որը ներառում է աշխատուժի գիտելիքների և հմտությունների ցանկացած տեսակի հարմարեցում կամ թարմացում, որոնք պահանջվում են աշխատողներից՝ աշխատանքը պահպանելու կամ գործազուրկներից՝ աշխատանքի անցնելու համար: Աշխատուժը պետք է հնարավորություն ունենա սովորելու իր աշխատանքային ողջ կյանքի ընթացքում՝ ըստ իր ցանկության և (կամ) աշխատանքային շուկայի պահանջների:

4. ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

Ստորև ներկայացվում են նախնական և միջին մասնագիտական կրթության բարեփոխումների ռազմավարական խնդիրների լուծման գործնական ուղիները, որոնք ստորաբաժանված են հետևյալ ենթակատերի:

- Ա) խնդրի հիմնավորումը,
- Բ) խնդրի լուծման եղանակները,
- Գ) պատասխանատու մարմինը,
- Դ) խնդրի լուծման իրավական ապահովումն ու միջոցառումները,
- Ե) ժամկետները,
- Զ) անհրաժեշտ միջոցները:

1. Բաց և ժողովրդավարական համակարգ

Ա) Այս խնդիրը լուծվում է յուրաքանչյուր քաղաքացու համար նախնական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի հավասար մատչելության ապահովման և անվճար ուսուցման հնարավորության միջոցով, համաձայն որի, համակարգ մուտք գործել ցանկացող քաղաքացիները, հատկապես՝ երիտասարդները չպետք է հանդիպեն որևէ խոչընդոտի: Անհրաժեշտ է, որ անձի՝ ուսման ավարտին ստացած որակավորումները ճանաչվեն, իսկ ապագայում ամրապնդվեն ուսանողի ձեռք բերած գիտելիքները:

Հավասար և անվճար կրթությունը սերտորեն կապված է նաև տնտեսական անհավասարությունների հետ, որը անբարենպաստ պայման է ստեղծում անապահով ընտանիքների երեխաների համար:

Թերևս անհրաժեշտ է կիրառել այնպիսի չափանիշների համակարգ, որում հաշվի կառնվեն նաև ընտանիքների եկամուտները: Այս ճանապարհով կարելի է կատարել պետական միջոցների վերաբաշխում, որը հնարավորություն կընձեռի համակարգ ներառել ավելի մեծ թվով ցածր եկամուտ ունեցող ընտանիքների երեխաներ:

Սահմանագիտական ուսումնական հաստատություններում առնվազն ներկայիս տեսքով օրենսդրորեն վիճակարույց է վարձավճարների խնդիրը, մինչդեռ ՀՀ Սահմանադրության «մրցութային կարգով» արտահայտությունը պահանջում է դրա իրական կիրառման հստակ սահմանում:

ՄԿՈՒ համակարգում բոլորի համար հավասար հնարավորություններ ապահովելու առումով առկա է ևս մեկ անհամապատասխանություն: Արական սերի ուսանողները համեմատաբար անբարենպաստ պայմաններում են գտնվում, քանի որ 18 տարին լրանալուն պես ընդհատում են իրենց կրթությունը՝ զորակոչվելով երկամյա գինվորական ծառայության: Այս անհավասարությունը երկակի բնույթ է կրում. մի կողմից՝ անհավասարություն բարձրագույն և նախնական ու միջին մասնագիտական կրթության համակարգերում ընդգրկված տղաների, մյուս կողմից՝ իգական և արական սերի ուսանողների իրավունքների միջև:

Ժողովրդավարական համակարգի բավարար գործունեության համար անհրաժեշտ է նաև սահմանել համապատասխան չափանիշների համակարգ, որը հավասարապես կկիրառվի բոլոր ուսումնական հաստատությունների միջև:

նկատմամբ՝ անկախ դրանց իրավական կարգավիճակից և սեփականության ձևից:

Բ) Առաջարկվող ռազմավարության կարևորագույն նպատակներից է համակարգի անհավասարությունների վերացումը, որը կմեծացնի նախնական և միջին մասնագիտական կրթության հեղինակությունը և գրավչությունը:

Եթե, այնուամենայնիվ, ըստ “մղցութային հիմունքներով” արտահայտության, միայն բարձր գնահատականներ ստացած դիմորդները պետք է ստանան անվճար ուսուցմում, ապա օրենքը պետք է ընդունի ուսանողների ընդգրկման առավել սոցիալականացված ծրագիր:

Անհրաժեշտ է հստակ ձևակերպել նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների արական սեռի ուսանողներին 18 տարին լրանալիս տրվում է զինվորական ծառայության տարկետում մինչև ուսումնան ավարտը, ինչը, թերևս, ապագայի խնդիր է:

Գ) Յայաստանում նախնական և միջին մասնագիտական կրթության բաց և ժողովրդավարական համակարգի ապահովման խնդիրը գտնվում է ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ կառավարության իրավասությունների ներքո:

Դ) Խնդրի լուծման երաշխիքները պետք է հստակորեն ամրագրված լինեն «Նախնական և միջին մասնագիտական կրթության մասին» և ՀՀ այլ օրենքներում:

Ե) Յամակարգում անհրաժեշտ փոփոխությունները կկիրառվեն 2005/2006 ուսումնական տարվանից՝ համապատասխան օրենք(ներ)ի և ենթաօրենսդրական ակտերի ընդունումից հետո: Նոր դրույթների իրականացումից մեկ տարի անց արդեն խսկ ակնկալվում դրական արդյունքներ են:

Զ) Ընտանեկան ցածր եկամուտ ունեցող ուսանողների համար նախատեսված ֆինանսական աջակցության սահմանման մասին դրույթի կիրառման համար սկզբնական փուլում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն պահանջվի, քանի որ կվերաբախչվեն ներկայումս պետական բյուջեից հատկացվող միջոցները: Առաջարկվող տարբերակ հետագա ընդլայնումը կիրականացվի ընթացքում առաջացող ֆինանսական բեռը ՀՀ կառավարության կողմից ստանձնելու հնարավորության չափով:

2. Կրթության շարունակականություն

Ա) Ցանկացած մասնագիտական կրթության և ուսուցման համակարգ պետք է հնարավորություն տա իր ուսանողներին շարունակել իրենց կրթական ուղին այնքան, որքան ցանկանում են:

Շարունակական կրթությունը ընկալվում է որպես անձի չընդհատվող զարգացումն ապահովող գործընթաց՝ բաժանված փուլերի, որոնցից յուրաքանչյուրը նախադրյալներ է ստեղծում նոր, առավել բարձր մակարդակի (աստիճանի) անցնելու համար:

Այս առումով, անհրաժեշտ է լիովին ապահովել ուսանողների մուտքը կամ վերադարձը համակարգ, եթե այն տեղի է ունենում որոշակի ժամանակահատվածով աշխատանքային գործունեությունից կամ նախորդ կրթական աստիճանից դուրս մնալուց հետո: Սակայն այս պահանջը կապված է

ցանկացած փուլում ձեռք բերված որակավորումների ճանաչման հետ, ինչը կապահովի ուսանողների կապը նախկին կրթական հետագծերի և առկա հեռանկարների միջև։ Որակավորումները պետք է փոխանցելի լինեն ուսանողի՝ համակարգում վերականգնվելիս։ Որակավորումները պետք է համապատասխանեցվեն որակավորումների միջազգայնորեն ընդունված ստանդարտներին (սանդղակ՝ առաջարկված CEDEFOP-ի և ընդունված ETF-ի կողմից)։

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել տարաբնույթ հաստատությունների կողմից իրականացվող կրթության շարունակականության ապահովման պահանջին։

Այսպես՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր են իրականացվում՝

- ա) նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություններում՝ արհեստագործական ուսումնարաններում,
- բ) հանրակրթական հաստատությունների ավագ դպրոցի արհեստագործական հոսքերում,
- գ) միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում,
- դ) ուսումնական կենտրոններում,
- ե) քրեակատարողական հիմնարկներում,
- զ) անհատական մասնագիտական ուսուցման ձևով (վարպետային ուսուցում)։

Միջին մասնագիտական կրթական ծրագրեր են իրականացվում.

- ա) միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ քոլեջներում և ուսումնարաններում,
- բ) բարձրագույն ուսումնական հաստատություններում։

Նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգը պետք է ապահովի սովորողների կրթական հետագծի շարունակականությունն ու հաջորդականությունը։

Բ) Նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգի հստակեցման և դրա արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է սահմանել հետևյալ կրթական հետագծերը և դրանց ելքերը, (առավել մանրամասնորեն նարկայացված են հավելված 4-ում)։

1. հիմնական ընդհանուր կրթության հիմքով նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն՝ առանց միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության, ելք դեպի աշխատանքային շուկա,
2. հիմնական ընդհանուր կրթության հիմքով նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությամբ, ելք դեպի կրթական համակարգի հաջորդ աստիճանները և աշխատանքային շուկա,
3. միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն, ելք դեպի կրթական համակարգի հաջորդ աստիճանները և աշխատանքային շուկա,
4. հիմնական ընդհանուր կրթության հիմքով միջին մասնագիտական կրթություն՝ առանց միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության, ելք դեպի

համապատասխան մասնագիտության գծով բարձրագույն կրթության համակարգ և աշխատանքային շուկա.

5. Նախնական մասնագիտական կրթության հիմքով միջին մասնագիտական կրթություն, ելք դեպի համապատասխան մասնագիտության գծով բարձրագույն կրթության համակարգ և աշխատանքային շուկա.
6. միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով միջին մասնագիտական կրթություն, ելք դեպի կրթական համակարգի հաջորդ աստիճանները և աշխատանքային շուկա:

Կրթական մի ծրագրից մյուսին անցման գործընթացն առավել օրինաչափ դարձնելու համար անհրաժեշտ կլինի կրեդիտային (ստուգարքային) համակարգի ներդրումը:

Գ) Պատասխանատու մարմիններն են՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը՝ կրթության կազմակերպման և իրականացման մասով, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ գրաղվածության ոլորտի հետ կապի ապահովման մասով և ՀՀ արտաքին գործերի նախարարությունը՝ որակավորումների միջազգային ճանաչման մասով:

Դ) Օրենսդրութեն պետք է սահմանվեն կրթական ծրագրերը (կրթության հետագծերը) և դրանց ելքերը, որակավորումների աստիճաններն ու կապը դրանց միջև:

Ենթաօրենսդրական ակտերով, ըստ կրթական ծրագրերի, կսահմանվեն մասնագիտությունների ցանկերը, ուսումնառության նորմատիվային ժամկետները, կկարգավորվեն ուսումնական գործընթացի կազմակերպման հետ կապված այլ խնդիրներ:

Ե) Նոր համակարգը կմերդրվի 2005/2006 ուսումնական տարվանից՝ «Նախնական և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի ընդունումից, «Կրթության մասին» ՀՀ օրենքուն համապատասխան փոփոխություններ կատարելուց և համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվային ակտերի մշակումից և հաստատումից հետո:

Զ) Լրացուցիչ ֆինանսական ծախսեր կամ մարդկային ռեսուրսներ գործնականում չեն պահանջվի:

3. Կրթական ծառայությունների մատուցման որակը

Ա) Կրթության և ուսուցման բովանդակությունը որակյալ մասնագետների պատրաստման գործընթացի ամենակարևոր բաղադրիչն է: Այն պայմանավորված է պետության և հասարակության նպատակներով ու պահանջներով՝ ուղղված շոշանակարտների գիտելիքների, կարողությունների, հմտությունների համակարգին, նրանց աշխարհայացքային, քաղաքական և մասնագիտական որակավորումներին, զարգացածությանը, անձի ունակություններին ու պահանջներին:

Առավել առաջնային է կրթական պետական չափորոշիչների մշակման և ներդրման հարցը, որի անհրաժեշտությունը հատկապես նախնական և միջին մասնագիտական (ՆԱՄՄ) կրթության ոլորտում բխում է նրանից, որ միայն

չափորոշիչների ներդրման միջոցով է հնարավոր հասնել կրթության և ուսուցման նվազագույն պահանջների ապահովմանը, ապահովել ուսումնական ողջ գործունեության թափանցիկությունը, գնահատել կրթության որակը: Չափորոշիչներն են երաշխավորում կրթության համակարգի իրավահավասարությունը, հնարավորություն տալիս որոշել կրթության մակարդակի ու շնորհած վկայականների համարժեքությունը:

Չնայած իրավական, օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվների ու հաճանարարականների առկայությանը՝ առայսօր մշակված, հաստատված և ներդրված չեն նախնական կամ միջին մասնագիտական կրթության որևէ մասնագիտության պետական կրթական չափորոշիչ:

Ուսումնական հաստատություններում կենտրոնացված շուրջ 1,5 միլիոն գործային ֆոնդի գերակշռող մասը չի օգտագործվում, բարոյապես ու ֆիզիկապես մաշված է: Անկախ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ապահովածությունից, որը, թերևս, ցածր մակարդակի վրա է, և դրանց ապագա հնարավորություններից, ուսումնական բովանդակությունը ուսուցման բովանդակության հիմնական աղբյուրն ու առանցքն է:

Հանրապետության պետական ՄՄՈՒՅ-երի շենքերի (ընդամենը՝ 338,1 հազար ք.մ., մեկ սովորողին՝ 11,94 ք.մ) 75%-ը կարիք ունի կապիտալ, իսկ 95%-ը՝ ընթացիկ վերանորոգման: Բոլոր հաստատությունների ուսումնանյութական բազան կարիք ունի արդիականացման և վերազինման, քանզի առկա սարքավորումները ծայրահեռ հնացած են և հնարավորություն չեն տալիս բավարար մակարդակով իրականացնել գործնական և լաբորատոր պարապնունքների նույնիսկ մի մասը:

Թույլ է դասախոսական կազմի գերակշռող մասի պատրաստվածությունն ու իրազեկությունը, ինչն անդրադառնում է մասնագետների պատրաստման որակի վրա, սահմանափակում է հաստատության արդյունավետությունը և խոչընդոտում նրա զարգացմանն ու առաջընթացին:

Բ) Այսպիսով՝ ՆԱՍՍ կրթության բովանդակության և որակի բարելավմանը ուղղված ռազմավարական առաջնահերթ խնդիրն է՝ (քայլն է) կրթական չափորոշիչների մշակումը ըստ պատրաստվող մասնագիտությունների և ներդրումը ուսումնական գործընթացում:

Նպատակահարմար է ստանալ լայն պրոֆիլի և զարգացած անձնավորություն, որը փոփոխվող իրադրության պայմաններում, դեռևս չկայունացած տնտեսության շրջանականներում կարողանա հարմարվել աշխատանքի շուկայի պահանջներին՝ ոչ հիմնովին վերապատրաստման կամ վերաորակավորման միջոցով: Այդ նպատակով անհրաժեշտ է որոշակիորեն սահմանել սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ծավալն ու մակարդակը, այնպես, որ կրթության ու ուսուցման սպասվող բովանդակային բարեփոխումների, ինչպես նաև աշխարհում կատարվող նոր միտումների, գիտության, հայտնագործությունների արագընթաց նորանուժությունների պայմաններում շրջանավարտ մասնագետը լինի դրանց տիրապետողն ու կրողը:

Ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական ապահովվածության բարելավման նպատակով անհրաժեշտ է՝

- առաջիկա 6-8 ամիսների ընթացքում մշակել ՆԱՄՄՈՒՀ-երի ուսումնանյութական բազայի արդիականացման ուղղված գիտականորեն հիմնավորված նորմատիվներ,
- հիմնավորել այդ նորմատիվների կատարման անհրաժեշտ ֆինանսական միջոցները, այդ թվում նաև պետության կողմից տրամադրվող հատկացումների չափը, քանակն ու ժամկետները,
- սահմանել, որ այդ վերափոխումների տարեկան ծավալը տեխնիկական ՈՒՅ-երում պետք է կազմի 25%-ից ոչ պակաս, իսկ մյուսներում՝ 15-20%,
- լաբորատորիաներն ու արհեստանոցները կահավել ժամանակակից սարքերով, նյութերով և պիտույքներով,
- համակարգչայնացնել ուսումնական գործընթացը, ներդնել կապի և հաղորդակցման ժամանակակից սարքավորումներ,
- համակարգն ապահովել արդիական գիտական, մեթոդական, ուսումնական, տեղեկատվական գրականությամբ և միջոցներով:

Գ) Յիմնական պատասխանատուն լինելու է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը: Ըստ մասնագիտությունների՝ պետական կրթական չափորոշիչների մշակման գործում հավասար պատասխանատվություն են կրելու նաև համապատասխան մյուս նախարարություններն ու գերատեսչությունները: Առանձնակի դեր է վերապահվում ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությանը՝ չափորոշիչները ինչպես աշխատաշուկայի պահանջարկին, այնպես էլ աշխատանքային օրենսդրությանը համապատասխանեցնելու համար:

Ակնկալվող փոփոխությունների իրականացումն ապահովելու համար բյուջետային ֆինանսական անհրաժեշտ միջոցների հատկացման գործում իրավասությունը լիովին պատկանում է ՀՀ կառավարությանը:

Դ) Մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշչի ներման ու նրա հետագա կատարելագործման նպատակով նախատեսվում է իրագործել.

- ա) մասնագիտությունների դասակարգչի կատարելագործում աշխատանքի շուկայի պահանջներին և հասարակության զարգացման հեռանկարին համապատասխան,
- բ) խորացում մասնագիտության մեջ, պահանջների հստակեցում,
- գ) կրթության տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՏՏ) ներդրում և ընդլայնում,
- դ) կրթական նորարական ծրագրերին աջակցող կազմակերպական-մեթոդական համակարգի ստեղծում,
- ե) կրթական տարբեր ուղղությունների ու մակարդակների ասպարեզում աշխատաշուկայի ու բնակչության պահանջարկների կանխատեսման գործի զարգացում:

Պետական մակարդակով անհրաժեշտ է կազմակերպել և իրականացնել.

- Ղեկավար և դասախոսական անձնակազմի որակավորման բարձրացում և վերապատրաստում՝ համապատասխանեցված տվյալ ժամանակի շուկայի պահանջներին (2-3 տարին մեկ), որին կհետևեն
- ատեստավորման գորթընթացը,

- որակավորման բարձրացում և վերապատրաստում միջհաստատությունների և ներհաստատությունների միջոցների հաշվին:

Ե) Պետական կրթական չափորոշիչների մշակումը կպահանջի առնվազն 4-5 տարի: Այն պետք է սկսվի տարեկան 5-7 չափորոշչից, այնուհետև յուրաքանչյուր տարվա ընթացքում մշակվող և հաստատվող չափորոշիչների թիվը պետք է հետզհետեւ ավելանա:

Հաստատությունների ուսումնանյութական և ուսումնարտադրական միջոցների ու սարքավորումների վիճակի արմատական բարելավման համար ժանանակաշրջանը պայմանավորված կլինի այդ նպատակի համար հատկացված ֆինանսական միջոցների ծավալից:

Մանկավարժական համակազմի վերապատրաստման գործընթացը պետք է սկսվի Ռազմավարության ընդունումից անմիջապես հետո և կրի անընդհատ ու պարբերական բնույթ:

Զ) Չափորոշիչների մշակման ու հաստատությունների ուսումնանյութական բազայի բարելավման համար անհրաժեշտ կլինին ինչպես մարդկային, այնպես էլ ֆինանսական լրացուցիչ միջոցները: Ուսումնական հաստատությունների ներդրումը չի կարող բավարար լինել: Կպահանջվեն ներդրումներ թե ՀՀ պետական բյուջեից և թե այլ դոնոր-կազմակերպությունների կողմից:

Ուսումնական հաստատությունները SRS-ով բավարար չափով հագեցնելու համար նպատակահարմար է կատարել միանվագ էական ներդրում՝ պայմանով, որ SRS-ի հետագա արդիականացումը լինի ՆԱՍՍՈՒՀ-երի միջոցների հաշվին: Ուսման վարձավճարներից որոշակի մասհանումների դեպքում սկզբնական փուլում հնարավոր է ՆԱՍՍՈՒՀ-երում 20 սովորողին ապահովել մեկ համակարգչով և չորս-հինգ տարին մեկ դրանք փոխարինել նորերով:

Անհարժեշտ են կազմակերպչական միջոցառումներ և ֆինանսական միջոցների որոշակի ներդրումներ հաստատությունների հիմնական ուսումնական գործականությունը՝ գրիֆային (մակագրային) դասագրքերը և ուսումնական ձեռնարկները առաջիկա 8-10 տարիների ընթացքում գոնե 70-80% թարմացնելու և արդիականացնելու համար:

Գործող ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական բազան զգալի չափերով պետք է ապահովեն նաև պատվիրատու կազմակերպությունները: Ծախսերի որոշակի մասը պետք է բաժին ընկնի ուսումնական հաստատություններին՝ ի հաշիվ նրանց կողմից իրականացվող ուսումնական վճարովի ծառայություններից, արտադրական գործունեությունից և ՀՀ օրենսդրությանը չհակասող արտաբյուջետային այլ աշխատանքներից ստացվող եկամուտների:

4. Հմտությունների ապահովում՝ ըստ ամհատական կարողությունների

Ա) Հմտությունների զարգացումը ըստ անձի կարողությունների համակարգի արդյունավետության հիմնական սկզբունքներից մեկն է, որտեղ բոլոր մասնակիցները հնարավորություն ունեն բավարարել իրենց ուսման պահանջներն ու կարիքները: Ամբողջովին բավարարել սովորողների կրթական պահանջները հնարավոր չեն, քանի որ աշխատաշուկան, կրթական ծառայությունների մատուցման ու մասնագիտական ուսուցման համակարգերը

դեռևս անկատար են: Տնտեսության, գիտության և մշակույթի բնագավառները բնութագրվում են կոչտությամբ և պահպանողականությամբ, մինչդեռ կրթական համակարգը առավել կողմնորոշված է դեպի մարդասիրության և հումանիտարացման սկզբունքները: Ուստի սովորողներին հետագա մասնագիտական ուղին ընտրելու հարցերում աջակցելն անհրաժեշտություն է: Անձին պետք է տեղեկատվություն տրամադրվի աշխատաշուկայում նրա կրթական հնարավորությունների սահմաններում մրցունակ լինելու վերաբերյալ աշխատաշուկայի ու տնտեսության օրեցօր փոփոխվող պահանջների պայմաններում ճիշտ կողմնորոշվելու համար:

Այս առումով ՄԿՌ համակարգը սերտորեն պետք է կապված լինի աշխատաշուկայի և արտադրության կողմից ներկայացվող պահանջներին: Ուստի խիստ կարևորվում են մասնագիտական կողմնորոշման, խորհրդատվության ու մասնագիտական ընտրության հարցերը:

Մասնագիտական կողմնորոշման առաջ կանգնած երիտասարդին պետք է հասկանալի լինի, որ տարբեր բնագավառներից ստացած գիտելիքները թույլ են տալիս անձնային անհրաժեշտ որակների ու բնութագրերի հետ զարգացնելու մասնագիտության որակական հատկանիշները, որոնց առկայությունը կամ բացակայությունը վճռորոշ է լինելու աշխատաշուկայում մասնագետի ընտրության հարցում: Այսօրվա մասնագիտական ընտրությունը նրա համար վաղը ձեռք է բերելու սոցիալական ընտրության գժեր և լուծելու է նրա ապագա հասարակական կարգավիճակի հարցը: Այլապես, հետագայում մասնագիտական և անձնային որակների անհամապատասխանությունը նրան կանգնեցնելու է վերարակավորման անհրաժեշտության առաջ:

Մյուս կողմից մասնագիտական կողմնորոշումը կարևոր դեր է խաղում նաև այն անձանց համար, ովքեր աշխատանքային գործունեությանը վերադարձնու համար ցանկություն ունեն ընդգրկվել որևէ մասնագիտական ուսուցման կամ վերապատրաստման ծրագրում:

Դայաստանում սովորողների մասնագիտական կողմնորոշման ու խորհրդատվության գործընթացը խիստ անկատար է ու ոչ արդյունավետ: Անբավարար է ուսուցանողների՝ այս ոլորտին վերաբերող անհրաժեշտ գիտելիքների պաշարը և հոգեբանամանկավարժական պատրաստվածությունը:

Բ) Խնդրի իրագործման համար անհրաժեշտ է մշակել մասնագիտական կողմնորոշման հայեցակարգ և ստեղծել մասնագիտական կողմնորոշման ու խորհրդատվության գործառույթն իրականացնող կառույց, որը կապահովի կապը մասնագիտական կրթության համակարգի և աշխատանքի շուկայի միջև: Այդ կառույցը կարող է գործել որպես ՄԿՌ զարգացման ինստիտուտի ստորաբաժնում կամ որպես ինքնուրույն կազմակերպություն՝ վերոնշյալ ինստիտուտի հովանու ներքո:

Բացի այդ, նպատակահարմար է հանրակրթական միջին դպրոցի վերջին դասարանի ուսումնական պլանում նախատեսել «Մասնագիտության ներածություն» առարկան՝ տրամադրելով շաբաթական մեկ դասաժամ, իսկ հանրակրթական ավագ դպրոցում ամիսը մեկ անգամ կազմակերպել «կարիերայի օր»:

Ելնելով մասնագիտական առանձնահատկություններից, սեռից ու տարիքից, անհրաժեշտ է սահմանել այն մասնագիտությունների ցանկը, որոնք պահանջում են որոշակի սահմանափակումներ:

Գ) Խնդրի իրագործման համար պատասխանատու մարմիններն են ՀՀ կորության և գիտության ու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունները: Սակայն ՀՀ մյուս պետական կառավարման մարմինները ևս կրելու են պատասխանատվություն՝ տվյալ բնագավառի վերաբերյալ աշխատանքային շուկայի մասին ճշգրիտ տվյալներ տրամադրելու համար:

Քառուկ պատասխանատվություն պետք է կրեն գործատուները և դրանց միավորումները՝ աշխատուժի ընթացիկ և ապագա պահանջարկի, ինչպես նաև աշխատողներին ներկայացնելով մասնագիտական պահանջների մասին տեղեկատվության տրամադրման մասով:

Քասարակական այլ կազմակերպություններին նույնպես, իրենց ցանկությամբ, կարող են վերապահվել որոշակի իրավասություններ:

Դ) Մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվության համակարգը պետք է սահմանված լինի օրենսդրորեն: Ընդ որում համապատասխան օրենքում պետք է ամրագրված լինեն Հայաստանում այդ գործառույթն իրականացնող կառույցի առկայության պահանջը, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերի՝ ներառյալ գործատուններին, իրավասությունների հստակ բաշխումը:

Ե) Մասնագիտական կողմնորոշման համակարգը կարող է ներդրվել անհրաժեշտ օրենսդրական ապահովումից և համապատասխան կառույցի հիմնադրումից հետո ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում: Ըստ Էության այն կարող է գործարկվել արդեն 2005-2006 ուսումնական տարվա ընդունելությունից առաջ:

Զ) Մասնագիտական կողմնորոշման գործուն համակարգի ներդրման համար կպահանջվեն որոշակի միջոցներ՝ համապատասխան կառույցի բնականոն գործունեությունն ապահովելու, դրա աշխատակազմը վերապատրաստելու, գրականություն իրատարակելու համար: Ծախսերը հնարավոր է իրականացնել ՄԿՈՒ գարգացման ինստիտուտի, ինչպես նաև ուսումնական հաստատությունների և մասամբ գործատունների միջոցների հաշվին՝ սահմանափակ բյուջետային ներդրումների գուգորդմամբ:

5. Հմտությունների ապահովում՝ ըստ տնտեսության և աշխատանքի շուկայի կարիքների

Ա) Որակյալ աշխատուժի ստեղծումը ՀՀ տնտեսական և սոցիալական հիմնական խնդիրներից է: Այն ուղղակիորեն կապված է արտադրության ներկա կարիքների բավարարման իրանայականի հետ, որի կողմերն են՝

- պահանջվող աշխատուժի ծավալը և որակը,
- առաջարկվող աշխատուժի ծավալը և որակը,
- մի շարք ուղեկցող գործուններ /նարզ, տարիք և այլն/:

Հայաստանում գրանցված ուղղակի ներդրումների ցածր մակարդակին գուգընթաց գոյություն ունի շարունակական ճեղքվածք մասնագետների աշխատանքային հմտությունների պահանջարկի և առաջարկի միջև, որը և

ձևավորում է ծավալուն գործազրկություն: ճեղքվածքն առավել խորանում է պահանջարկի սակավության և առաջարկի առատության պայմաններում, երբ գործատուն դառնում է ավելի քմահաճ և ստեղծված պայմանները հաջողությամբ օգտագործում է աշխատութիւն էժանացման համար:

Աշխատանքային շուկան Հայաստանում այսօր հավաքական հասկացություն է, որի ներքո հանդես են գալիս կոնկրետ գործատուն, վերացական գործատուն (անդեմ շուկան), միջնորդ կազմակերպությունները՝ զբաղվածության պետական և մասնավոր ծառայությունները, աշխատանքի տեղեկատու շաբաթաթերթերը («Գինդ», «Էքսպրես», «Եթեր» և այլն), կրթական ցուցահանդեսները:

Հայաստանում գործատուն այսօր, բացառությամբ եզակի դեպքերի, ազատորեն օգտվում է աշխատանքային էժան շուկայի առատությունից և անգամ կարիք չունի դիմելու կրթօջախներին, քանի որ տարբերություն չի տեսնում իին և նոր մասնագետների միջև: Այսօր դեռևս օրինաչափ չէ, որ գործատուն ներդրում կատարի և պայմանագրով կամ որևէ այլ կերպ կրթօջախին մասնագետներ պատվիրի իր հետագա կարիքների համար. այսօր գործատուն հակված չէ կրթամետ գործունեության: Մինչդեռ ՍՍՈՒՀ-ները ուսումնադաստիարակչական աշխատանքներին զուգահեռ պարտավորված են վարել շուկայամետ գործունեություն: Դա բխում է ուսումնական հաստատությունների շահերից, քանի որ աշխատատեղերի սղությունը և ընդունելության համար պատրաստված գովազդը փոխվագակցված են միմյանց: Պատրաստած մասնագետներին աշխատանքի տեղավորելու համար հաստատությունը ձգտում է գրավել գործատուին, որպեսզի վերջինս աշխատաշուկայում կողմնորոշվի դեպի իր պատրաստած մասնագետը:

Կրթական ոլորտում այսօր պետք է տարբերել 2 գործելակերպ.

- կոնկրետ գործատուի համար մասնագետ պատրաստելու պրակտիկա,
- ընդհանրական աշխատանքային շուկայի համար մասնագետ պատրաստելու պրակտիկա:

Առաջինը ենթադրում է այնպիսի մասնագետների պատրաստում, երբ հաշվի են առնվում գործատուի կոնկրետ պահանջները: Այս դեպքում կարող է իրագործվել պրոֆիլի նեղացում և խորացում: Մյուսը ենթադրում է անցումային ժամանակաշրջանին բնորոշ, լայն պրոֆիլի, շարժուն, մի քանի մասնագիտացումների տիրապետող մասնագետների պատրաստում: Այսօրվա աշխատանքային շուկան թույլ չի տալիս մասնագիտությունների տրոհում նեղ մասնագիտացումների (որպակավորումների):

Մասնագետների աշխատանքային հմտությունների նկատմամբ շուկայի պահանջարկի և այսօրվա գոյություն ունեցող առաջարկի վերը նշված ճեղքվածքը մասնագիտական որակի առումով երբեմն թույլ չի տալիս, որ մասնագետը հավակնի թափուր աշխատատեղի: Միայն մի դեպքում է գործատուն դիմում ՍՍՈՒՀ՝ կադրի որակավորման խորացման կամ հարակից մասնագետի վերարակավորման համար:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատության գործունեության մեջ աշխատանքի շուկայի պահանջարկի և առաջարկի փոխհարաբերության խնդիրը կրթական ամեն մի կոնկրետ սերնդի համար առաջանում է 2 անգամ՝ ընդունելության և ավարտական տարիներին: Ընդունելության ժամանակ գործում

Է մի որոշակի հարաբերակցություն՝ դիմորդների քանակի, որակի և հաստատության ընդունելության հնարավորությունների միջև։ Բացի այն, որ քոլեզների դեկավարությունը իրենց մասնագիտությունների նկատմամբ դիմորդների հետաքրքրվածության աստիճանը պարզելու համար կազմակերպում է որոշակի մոնիթորինգ, մոնիթորինգ, որպես կանոն, կատարվում է նաև դիմորդների և նրանց ծնողների կողմից՝ այս կամ այն ուսումնական հաստատության և դրա մասնագիտությունների հեռանկարային պահանջարկի առումով։

Այսօր բացակայում է ՄՄՈՒՀ-ների շրջանավարտների աշխատանքի տեղավորման կամ ԲՈՒՀ ընդունվելու վերաբերյալ ճշգրիտ վիճակագրությունը։

Բ) Վերը նշված խնդիրներն իրագործելու համար անհրաժեշտ է, որ

1. գործատուն փնտրի հանդիպակաց ուղիներ և ծավալի կրթամետ գործունեություն,
2. ուսումնական հաստատությունները ծավալեն գործատուին միտված հետևյալ աշխատանքները。
 - իբրև կուրսային, դիպլոմային աշխատանքների կատարման և պաշտպանության, բանվորական որակավորման շնորհման հանձնաժողովների դեկավար կամ անդամ իրավիրել գործատուներին,
 - հաստատությունների ուսանողների տարբեր տիպի պրակտիկաների կազմակերպումը ուղղակիորեն կապել գործատուի հետ՝ նախապես կնքելով պայմանագրեր,
 - մասնագիտական կրթության պրակտիկայի ծրագիրը դարձնել գործնական և կիրառելի՝ առավելագույնս համապատասխանեցված պրակտիկայի բազային ձեռնարկության գործունեությանը,
 - ելելով նոր աշխատաշուկայի պայմանների թելադրանքից՝ հաստատություններում ստեղծել համապատասխան օղակ, որը ողջ ուսումնական տարվա ընթացքում կկատարի մարքետինգային գործունեություն,
 - գործատուներին մասնագետի կարողությունների և հմտությունների վերաբերյալ պատկերացում տալու համար՝ մշակել և յուրաքանչյուր շրջանավարտի դիպլոմին կից տրամադրել նաև պրոֆեսիոնալ գործունեությանը,
 - ուսումնական հաստատությանն ու գործատուին՝ իբրև պետականությամբ ու գործառույթով շաղկապված գործընկերների, շահեկանությամբ ու վարչականորեն պարտավորեցնել գործակցել միմյանց հետ՝ պահանջարկի և առաջարկի հարցում՝ անմիջականորեն կամ զբաղվածության ծառայության միջոցով,
 - Հայաստանում ՄԿՈՒ արդյունավետության բարձրացման համար ստեղծել մարդկային ռեսուրսների և աշխատաշուկայի փոխկապվածության տվյալների էլեկտրոնային բազա,
 - հիմնել Ազգային հանձնաժողով (խորհուրդ)՝ ՄԿՈՒ զարգացման և գործունեության համակարգման նպատակով,
 - ապահովել տեղեկատվություն և քարոզչություն՝ ՄԿՈՒ համակարգի պահանջարկի առաջնահերթության վերաբերյալ,

- ուսումական հաստատություններում հիմնել մարդկային ռեսուրսների ծառայություն՝ շուկայանետ աշխատանքներ ծավալելու նպատակով:

գ) Վերը նշված միջոցառումների կատարման համար պատասխանատու են ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, մասնագիտական ուսումնական հաստատությունները, ինչպես նաև Ազգային հանձնաժողովում հավասարապես ընդգրկված ՄԿՈՒ բոլոր անդամները՝ սոցիալական գործընկերները, դրանց միավորումները, տարածքային կառավարման և ինքնակառավարման մարմինները:

Դ) Օրենքով կսահմանվեն Ազգային հանձնաժողովի (խորհրդի) ստեղծումը և իրավասությունները, ինչպես նաև սոցիալական գործընկերների և ՄԿՈՒ համակարգի փոխհարաբերությունները: Մնացյալ խնդիրները կսահմանվեն ենթաօրենսդրական նորմատիվային ակտերով:

Ե) Նշված խնդիրների իրագործումը կարող է սկսվել օրենքի ընդունումից հետո: Անհրաժեշտ ֆինանսավորման դեպքում համակարգը գործարկելու համար կպահանջվի մոտ երկու տարի:

Զ) Գործատու-գործառու սերտ կապն ապահովող համակարգի աշխատանքը կպահանջի և մարդկային, և ֆինանսական ռեսուրսներ: Ընդհանուր արժեքը հաշվարկվելու է հետևյալ տարրերից: Տեղական հզորությունների նկատմամբ պահանջի հետազոտում, ծրագրային ապահովման և համակարգչային տեխնիկայի ներդրում, հետազոտողների և աշխատակիցների պատրաստում, վարչական և չնախատեսված ծախսեր, ՀՀ կրթության և գիտության նախարարության որոշմամբ Ազգային հանձնաժողովում ընդգրկված համապատասխան մասնագետների վճարում և այլն:

6. Ծախսերի արդյունավետություն

Ա) Պետական բյուջեն բավարար չէ ՄԿՈՒ համակարգի ծախսերը հիգալու համար, որոնց մեջ ընդգրկվում են աշխատավարձը, նյութերի, սարքավորումների և շահագործման ծախսեր: Ուշ-երի ֆինանսական սուլ հնարավորությունները չեն բավարարի բարեփոխումների իրագործման համար: Նրանք հարկ են վճարում այն գումարներից, որոնք գանձվել են իրեն ուսման վարձ՝ կրթական ծրագիրը կատարելու համար:

ՀՀ ազգաբնակչությունը վերջին տարիներին էապես նվազել է, և համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով՝ Ուշ-երի միավորումը դառնում է անհրաժեշտություն, որի համար անրրաժեշտ է խոշոր բնակավայրերում սահմանել ուսանողների նվազագույն քանակ և ստեղծել դրսի ուսանողների բնակության այլամաններ: Ներկա ֆինանսական կարիքները և ապագա զարգացման դժվարությունները պետք է միավորեն ավանդական և նոր մոտեցումները, արդյունքում կվերաբաշխվի ՄԿՈՒ համակարգի բյուջեն: Միջազգային դոնորների (այդ թվում ԵՀ) ներդրումը կարող է թերևացնել որոշ ծախսեր: Ներկա ՄԿՈՒ արդյունավետության բարձրացումը պետք է հիմք հանդիսանա ծախսերի չափավորման համար: Սակայն այս գործունեությունը

պետք է ծավալվի՝ մրցակցային պահ չստեղծելով մասնագետների և կազմակերպությունների համար:

Բ) ՄԿՈՒ-ի համակարգի գործառնական ծախսերի վերանայումը կարող է ուղեկցվել հաստատությունների ցանցի որոշ վերանայմամբ, որը նախարարությանը հնարավորություն կը նձեւի հատկապես խոշոր քաղաքներուն կոճատելու նույն մասնագիտություններն ուսուցանող հաստատությունների թիվը:

Արդյունքում մասնավոր և պետական սեկտորների կողմից համատեղ ֆինանսավորվող ուսուցման գաղափարը պետք է հաստատագրվի օրենքով: Սա կարող է կիրառելի լինել թե նախնական, թե միջին մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտների նախաձեռնությունների համար: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ՄԿՈՒ տարբեր տեսակների ֆինանսավորումը սովորական երևույթ է, և պետք է խրախուսվի: Սա կարող է տեղի ունենալ, եթե հանրային և մասնավոր համագործակցությանը անդրադառնան իրավական տեսանկյունից: Ի վերջո, հանրային և մասնավոր համագործակցության դրույթին համապատասխան, ՄԿՈՒ ստեղծման և գործունեության հիմնադրամի վերաբերյալ համառոտակի նկարագրի առաջին մշակումը պետք է նախատեսվի այս օրենքով: Այն կիմնավոր սոցիալական գործընկերների ֆինանսական ներդրումների վրա և, նրա իրատեսական լինելը հաստատվելու պարագայում, հիմնադրամը կդրվի գործունեության մեջ:

Արմատապես վերափոխման կարիք ունի պետության կողմից տրամադրվող ֆինանսական միջոցների օգտագործումը հաստատության կողմից:

Մեկ ուսանողի կրթաթոշակը ամսական 4700 դրամ է և, լինելով չնչին գումար, ըստ Էռլիքյան, չի լուծում որևէ սոցիալական հարց և չի խթանում առաջադիմությունը: Նպատակահարմար է վերանայել կրթաթոշակների համար հատկացվող միջոցների տրամադրման և բաշխման սկզբունքները՝ նկատի ունենալով հետևյալ մոտեցումները՝

- տվյալ հաստատությանը կրթաթոշակի համար հատկացված միջոցները հաստատությունները տնօրինում են ինքնուրույն՝ նկատի ունենալով ոչ միայն առաջադիմությունը, այլև ուսանողի սոցիալական վիճակը (կարող են վճարել նպաստների ձևով):
- ողջ համակարգի համար նախատեսված կրթաթոշակի ընդհանուր ֆոնդից ձևավորմում է պահուստային հիմնադրամ, որը ՀՀ կառավարության սահմանած կարգով տնօրինում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը՝ առանձնապես աչքի ընկած կամ ֆինանսական օժանդակություն խիստ կարիք ունեցող՝ բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին նպաստավորելու կամ խրախուսելու նպատակով:

ՆԱՄՄԿ ֆինանսավորման բարեփոխումների ռազմավարությունը պետք է ուղղված լինի հետևյալ հարցերի կանոնակարգմանը.

- պետական ֆինանսավորման հստակեցում, հրապարակայնության ապահովում, հավասար ելակետային պայմանների ապահովում,

- պետության կողմից ֆինանսական ապահովության աստիճանական բարձրացում, այն հավասարեցնելով համաշխարհային միջին, ապա նաև զարգացած երկրների ֆինանսական չափանիշներին,
- պետական ֆինանսավորման նպաստների տարածում վճարովի համակարգում սովորողների վրա,
- ֆինանսական միջոցների ձևավորման և ծախսերի վերաբերյալ հաշվետվությունների հստակեցում ու կանոնակարգում, հրապարակայնության ընդլայնում, թափանցիկության ապահովում,
- ուսման վարձերի, կադրերի պատրաստման արժեքի որոշման կանոնակարգում և հստակեցում:

Գ) Ֆինանսական նոր մեխանիզմներին անցման համար պատասխանատու Են ՀՀ կրթության և գիտության և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունները: Հաստատության եկամուտների ու ծախսերի թափանցիկության, հրապարակայնության, ֆինանսական միջոցների առավել ռացիոնալ օգտագործման պատասխանատվությունը կղրվի հաստատությունների կողեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների վրա:

Դ) ՆԱԽՍ կրթության ֆինանսավորման բարեփոխումների նշված ռազմավարությունը ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ գործողությունները և կիրառել հետևյալ մեխանիզմները: Պետական ֆինանսավորումը իրականացնել յուրաքանչյուր ուսումնական հաստատության համար մեկ տողով՝ ելնելով պետական պատվերի սովորողների թվից, հետևյալ բանաձևով՝

$$B = A \times N + C + D, \text{ որտեղ}$$

B – տվյալ ֆինանսական տարում ուսումնական հաստատությանը պետական բյուջեից տրվող գումարն է,

A - պետական պատվերով յուրաքանչյուր սովորողի ուսմանը հատկացվող գումարն է, որը կախված է մասնագիտության բնույթից,

N – պետական պատվերով սովորողների ընդհանուր թիվն է ֆինանսական նախորդ տարվա հոկտեմբերի դրությամբ,

C - շենքի, շինությունների պահպանման համար տրամադրվող գումարն է,

D – պետության կողմից սովորողներին հատկացվող նպաստներն են, որն առայժմ իրականացվում է կրթաթոշակների տեսքով:

Յուրաքանչյուր տարվա համար ՀՀ կառավարությունը պետք է որոշի **A**, **C** և **D**-ի չափերը, որոնց մասին տեղեկացվում է ուսումնական հաստատությունը:

Ֆինանսական բարեփոխումների իրականացման համար անհրաժեշտ է.

- օրենքի «Ֆինանսավորում» բաժնում ամրագրել հոդված պետական ֆինանսավորման բովանդակության և երաշխիքների վերաբերյալ,
- կազմակերպել դասընթացներ տնօրենների, հաշվապահների և խորհուրդների անդամների համար ֆինանսական միջոցների, նախահաշվի, բյուջեի կազմման և դրանց բաշխման (ծախսերի) ձևերին տիրապետելու համար,
- ձեռնարկների և օրինակելի (տիպային) ձևերի մշակում,
- մշակել սովորողներին նպաստներ տրամադրելու կարգը,

- մշակել վարձավճարների չափի ձևավորման որոշման կարգը, որը հաշվի կառնի ինչպես հարցի սոցիալական կողմը, այնպես էլ կրթության որակի ապահովման խնդիրը:

Ե) Անցումը ֆինանսական նոր մեխանիզմներին կարող է սկսվել օրենքի ընդունումից և հաստատությունների համապատասխան աշխատողների՝ նոր պայմաններում գործելու համար վերապատրաստելուց անմիջապես հետո:

7. ՄԿՈՒ տարբեր ձևերի ներառումը միասնական օրենսդրական շրջանակում

Ա) Վերը ներկայացվեց ՀՀ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների բաշխվածությունն ըստ նախարարությունների: Առավել խայտարդետ պատկեր է ներկայացնում նախնական մասնագիտական կրթության կառավարման համակարգը: 2001թ. հունվարի 1-ի դրությամբ գործող 61 մասնագիտական տեխնիկական ուսումնարաններից 16-ը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության էին, 10-ը՝ Երևանի քաղաքապետարանի, իսկ մնացած 35-ը հանրապետության մարզերի: 2001-2002 թվականներին իրականացված ռացիոնալացման ծրագրի շրջանակներում դրանց մի մասը վերակազմակերպվեցին արհեստագործական հոսքով ավագ դպրոցների, մյուսները միացվեցին այլ ուսումնական հաստատությունների, իսկ մի քանիսը լուծարվեցին: Արդյունքում՝ ներկայում ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության տակ գործում է 11, Երևանի քաղաքապետարանի ենթակայության 6 և ՀՀ մարզպետարանների՝ 11 այդպիսի ուսումնական հաստատություն:

Ուսումնական հաստատությունների ցանցի այսպիսի տարանջականացվածությունն ու անհիմն ապակենտրոնացումը հանգեցնում են դրանց կառավարման ծայրահեղ անարդյունավետությամբ, որն արտահայտվում է որոշումների կայացման դանդաղկոտությամբ, միասնական պետական կրթական քաղաքականության մշակման և իրականացման գրեթե անհնարինությամբ, առանց այն էլ ծայրահեղ սուր ռեսուրսների անարդյունավետ օգտագործմամբ և այլն:

ՄԿՈՒ-ի ներկայիս համակարգը՝ շրջանավարտների մասնագիտացվածության աստիճանով այլևս չի համապատասխանում աշխատանքի շուկայի և արտադրության պահանջներին, դրա կառուցվածքին՝ արտահայտված, մասնավորապես, փոքր և միջին ծեռնարկությունների մշտապես աճող թվով: Համակարգը շարունակում է անդադար պատրաստել նույն մասնագետներ նույն թվաքանակով և հմտությունների մակարդակի նույն որակով: Միաժամանակ, այն ճկուն չէ շնորհվող որակավորմների տեսանկյունից և այդ իմաստով համեմատելի չէ այլ երկրների ՄԿՈՒ-ի համակարգերի հետ:

Մասնագիտական որակավորման մակարդակները, որոնք շնորհվում են Հայաստանում, միջին և դրանից ցածր՝ նախնական մասնագիտական կրթությունն է, ավելի ցածր՝ սկզբնական մասնագիտական ուսուցում: Երկուսն էլ գործնականում չեն հապատասխանում Եվրոպայում գործող ցանկացած մասնագիտական մակարդակի: Բացի այդ, աշխատող կամ գործազուրկ մեծահասակների ճնշող մեծամասնության համար նախատեսված չէ ուսուցման որևէ ծրագիր, որը հեռանկարում կնպաստեր նրանց զբաղվածությանը:

Բ) Անդրամեջտ է տարանջատել և հստակորեն սահմանել մարդկային ռեսուրսների զարգացման (ՄՌԶ)`

- մասնագիտական կրթություն,
- մասնագիտական ուսուցում,
- սկզբնական մասնագիտական ուսուցում,
- շարունակական մասնագիտական ուսուցում

բաղադրամասերը և պաշտոնական ճանաչում տալ գործունեության համապատասխան տեսակներին, ընդ որում՝ նաև սպասվող արդյունքի տեսանկյունից:

Բացի այդ անհրամեջտ է սահմանել նաև՝

- մարդկային ռեսուրսների զարգացման յուրաքանչյուր բաղադրիչի իրականացման համար պատասխանատու մարմինը,
- ինչ եղանակով է յուրաքանչյուր բաղադրիչը կապված լինելու մյուսների հետ և լրացնելու դրանք,
- ինչպես են ՄՌԶ բաղադրիչները կապված լինելու գբաղվածության և արտադրության հետ:

Բոլոր վերոնշյալ սահմանումները պետք է ներառված լինեն մեկ միասնական իրավական շրջանակում՝ անհամապատասխանություններից խուսափելու և արդյունավետություն ապահովելու նպատակով:

Մասնագիտական կրթությունը և սկզբնական ու շարունակական մասնագիտական ուսուցումը պետք է միասնաբար բավարարեն հասարակության բոլոր պահանջները՝ մարդկային ռեսուրսները թարմացնելու համար: Այդ դեպքում նրանք պետք է ներառեն գբաղվածության ոլորտում և արտադրական համակարգում պահանջվող որակավորումների բոլոր մակարդակները՝ ըստ պահանջի լրացնելով մեկը մյուսին, ինչպես դա կիրառվում է զարգացած եվրոպական երկրներում՝ ապահովելով որակավորումների մակարդակների ոյլորին ըմբռնում, որը զգալիորեն կարող է ազդել ունակությունների ճանաչման ու փոխանցելիությանն ուղղված համակարգի կայացմանը:

Գ) Մարդկային ռեսուրսների զարգացման համար պատասխանատու պետական կառավարման մարմիններն են լինելու ՀՀ կրթության և գիտության նախարարությունը՝ մասնագիտական կրթության մասով, և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ մասնագիտական ուսուցման մասով, ինչպես նաև սոցիալական գործընկերները՝ ի դեմս գործատումների և աշխատավորների միավորումները ներկայացնող կազմակերպությունների:

Դ) Օրենսդրություն կսահմանվեն՝

- մարդկային ռեսուրսների զարգացման բաղադրիչները, համապատասխան գործունեության տեսակները, դրանց ներկայացվող պահանջները (լիցենզավորում, հավատարմագրում),
- որակավորումների աստիճանների համակարգը,
- պատասխանատու մարմինները, դրանց լիազորությունները,
- շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման իրականացման սկզբունքները:

Օրենքի ընդունումից հետո կմշակվեն և կընդունվեն դրանից բխող ենթաօրենսդրական նորմատիվային ակտեր: Բացի այդ, ՀՀ կառավարության որոշմամբ՝

- արհեստագործական հոսքով ավագ դպրոցները (նախկին ՄՏՈՒ-ները) կվերակազմակերպվեն նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների՝ արհեստագործական ուսումնարանների.
- Հայաստանում ներկայումս գործող բոլոր միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունները կհանձնվեն ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությանը:

Ե) Հաստատությունների վերակազմակերպումը և ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության հանձնումը կավարտվի մինչև 2004-2005 ուսումնական տարվա սկիզբը: Առանձին հաստատությունների դեպքում՝ մինչև 2005թ. հունվարի 1-ը:

Խնդիրը կարգավորող մյուս օրենսդրական ակտերը կընդունվեն օրենքի ընդունումից հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Զ) Լրացուցիչ ֆինանսական միջոցներ կամ մարդկային ռեսուրսներ չեն պահանջվի:

8. Մասնագիտական ուսումնական հաստատությունների կառավարման և ղեկավարման ռացիոնալացում

Ա) Մասնագիտական ուսումնական հաստատությունների կառավարման և ղեկավարման համակարգի հիմնախնդիրներից է պետական մարմինների կողմից իրականացվող բազմաստիճան և առավել մանրակրկիտ միջամտությունը հաստատությունների կառավարման գործընթացին: Անբավարար է վստահությունը ՆԱՍՄԱ-ների նկատմամբ, նրանց ինքնավարության աստիճանը, անկատար են պետական կարգավորման հավասարակշռման՝ մի կողմից՝ պետական կառավարման և մյուս կողմից՝ ուսումնական հաստատության ինքնակառավարման մեխանիզմները, թույլ է հասարակական-պետական վերահսկողությունը կրթության որակի և արդյունավետության նկատմամբ:

Անհրաժեշտ են արմատական բարեփոխումներ, որոնք պետք է ունենան հետևյալ ռազմավարական ուղղվածությունները.

- կոլեգիալ կառավարման համակարգի ներդրում,
- կառավարման թափանցիկության և հրապարակայնության ապահովում,
- կառավարման հարցերում պետության միջամտության նվազեցում, ուսումնական հաստատությունների ինքնակառավարման ընդլայնում,
- ուսումնական հաստատությունների և կառավարման մարմնի միջև իրավասությունների և պարտականությունների բաշխման հստակեցում,
- կառավարիչների և ղեկավարների ունակությունների բարելավում,
- լիազորված պետական մարմնի ձերբագատում կառավարչական մի շարք ոչ էական գործառույթների իրականացումից, առավել արդյունավետ միջամտություն քաղաքական և ռազմավարական մակարդակի խնդիրների լուծմանը:

Բ) Վերը նշված ուղղությունների իրականացման համար կօգտագործվեն հետևյալ գործիքակազմերը:

- ՆԱՍՈՒԵ-ԵՐՈՒՄ կստեղծվի հաստատության **Կոլեգիալ կառավարման մարմին՝** հաստատության խորհուրդ: Խորհրդի կազմը պայմանավորված կլինի հաստատության սովորողների թվաքանակից՝ ընդգրկելով 5-13 անդամ: Խորհրդի անդամները կընտրվեն հաստատության աշխատակազմի, ուսանողական խորհրդի, հոգաբարձուների խորհրդի կողմից փակ գաղտնի քվեարկությամբ: Խորհրդի կազմում ներառվում են նաև կառավարման լիազորված մարմնի ներկայացուցիչներ, որոնց թիվը չափով է գերազանցի խորհրդի անդամների 30%-ը: Հաստատության խորհրդին կվերապահվի ուսումնական հաստատության գործադիր տնօրենի ընտրության լիազորությունը:
- Կառավարման **Կոլեգիալության** ապահովման նպատակով հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների՝ մասնաճյուղի, ամբիոնի, բաժնի վարիչների, հանձնաժողովների նախագահների պաշտոնները նույնականացնեն կլինի ընտրությունը:
- Կառավարման **հրապարակայնության և թափանցիկության** ապահովման նպատակով՝ հաստատության կանոնադրության մեջ կնախատեսվեն դրույթներ հաստատության գործունեության տարրեր բնագավառների վերաբերյալ հաշվետվությունների պարբերաբար հրապարակման պահանջի մասին:
- Ուսումնական հաստատությունների **ինքնավարությունը** կդրսենորվի:
 - = Ուսումնական գործընթացի կառավարման վերաբերյալ հիմնական որոշումների ընդունման,
 - = հաստատության բյուջեի ձևավորման,
 - = միջոցների ձեռքբերման և օգտագործման,
 - = Ուսումնական ծրագրերի մշակման ու ներդրման,
 - = դասավանդման մեթոդների ընտրության
 - = Ուսուցման գործընթացի կազմակերպման և այլ հարցերում:
- Խստորեն կիստակեցվի կառավարչական **լիազորությունների բաշխումը** հաստատությունների և պետական լիազորված մարմնի միջև՝ վերադրումներից և չկանոնակարգված գործառույթների առկայությունից խուսափելու նպատակով:

Գ) Պատասխանատու մարմինն է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

Դ) Խնդրի լուծմանն ուղղված դրույթները հիմնականում սահմանվելու են «Նախնական և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով:

Օրենքի ընդունումից հետո անհրաժեշտ կլինի մշակել և ներդնել մի շարք ենթաօրենսդրական նորմատիվային ակտեր, ինչպիսիք են՝

- Տնօրենի, մասնաճյուղի, ամբիոնի, բաժնի վարիչների ընտրության և նշանակման կարգերը,
- Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունը,
- Ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը.

- Ուսումնական հաստատության ստորաբաժանումների կանոնակարգերը և այլն:

Կառավարման նոր համակարգին անցնելու կապակցությամբ անհրաժեշտ կլինի կազմակերպվել՝

- տնօրենների վերապատրաստման դասընթացներ,
- ուսումնական հաստատությունների խորհուրդների նախագահների և անդամների դասընթացներ:

Ե) Փոփոխությունների իրականացումը կակսվի անմիջապես՝ համապատասխան օրենքի ընդունումից հետո:

Մինչև 2006թ. հունվարի 1-ը կավարտվի անհրաժեշտ մի շարք ենթաօրենսդրական ակտերի մշակումն ու հաստատումը:

Տնօրենների ընտրության համակարգը կմերդրվի 3-5 տարվա ընթացքում: Նախ և առաջ այն կտարածվի նոր նշանակվող տնօրենների ընտրության, ապա՝ գործող տնօրենների վերընտրության և վերանշանակման դեպքերի վրա:

Հաստատությունների ղեկավար կադրերի վերապատրաստման դասընթացները կակսվեն 2004թ. հոկտեմբեր ամսից և կրեն շարունակական բնույթ՝ 3-4 տարի հաճախականությամբ:

Զ) Էական ֆինանսական ներդրումներ չեն պահանջվի: Անհրաժետ նորմատիվային ակտերը կմշակվեն հիմնականում ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կողմից: Ուսումնական հաստատությունների ղեկավարների վերապատրաստումը կֆինանսավորվի տվյալ հաստատության կողմից, իսկ նախարարության աշխատակիցների համար կազմակերպվող դասընթացները կարող են ֆինանսավորվել մասամբ ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման համար, մասամ էլ Tacis-ի «Աջակցություն ՀՀ մասնագիտական կրթության ինտեգրացված համակարգի մշակմանը» ծրագրով նախատեսված միջոցների հաշվին:

9. Սոցիալական գործընկերություն

Ա) Մասնագիտական կրթությունն ու ուսուցումը պետք է զարգանան՝ հիմքում ունենալով սոցիալական գործընկերությունը: Այն իր դերը պետք է ունենա հատկապես շարունակական ուսուցման բնագավառում: Սոցիալական գործընկերների (գործատուների) որոշումների ընդունումը աշխատանքային շուկայի պահանջներին համապատասխանության երաշխիք է, իսկ նրանց մեծածավալ երկարաժամկետ ներդրումները ՄԿՈՒ համակարգի տարբեր աստիճանների և ձևերի մեջ կարող է ապահովել տնտեսության և մասնագիտական կրթության համակարգի զարգացման կայուն աճ:

Եթե պետությունը մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում թե օրենսդիրի և թե իրականացնողի դեր ունի, սակայն մյուս կողմից, քաղաքականության մշակումը չպետք է լիովին դրա ձեռքում լինի: Միաժամանակ, մասնագիտական կրթության գորեթե բոլոր քաղաքրիչները, պետք է ստեղծվեն երկկողմ և/կամ եռակողմ համագործակցության հիմքով, քանի որ աշխատաշուկայում սոցիալական գործընկերները պետք է ճանաչեն մասնագետների որակավորումներն ու հմտությունները: Այս իմաստով պետք է կիրառվի որոշումների ընդունման «վարից վեր» մոտեցումը: Սակայն

սոցիալական գործընկերների այսպիսի ներգրավումը ՄԿՈՒ-ի գործառույթներին չպետք է հիմնված լինի միայն նրանց նախաձեռնության վրա:

Սոցիալական գործընկերների ներգրավումը ՄԿՈՒ համակարգում անհրաժեշտ է տեղեկատվության, գիտելիքների և խորհրդատվության տրամադրման, ինչպես նաև ուսանողների համար գործնական ուսուցման տեղերի ապահովման համար:

Բ) Խնդրի իրագործման համար անհրաժեշտ է՝

- ազգային և, ըստ հնարավորության, տարածաշրջանային մակարդակներով ՄԿՈՒ համակարգի հարցերին վերաբերող սոցիալական երկխոսության հիմնում,
- սոցիալական գործընկերների դերի և պատասխանատվությունների սահմանում՝ ազգային, մարզային և տեղական մակարդակներով,
- տեղական մակարդակով ՄԿՈՒ համակարգի և/կամ դրա առանձին հաստատությունների և ձեռնարկությունների ու դրանց միությունների միջև կայուն համագործակցության հիմնում,
- սոցիալական գործընկերների՝ մասնագիտական կրթության հիմնադրամի ստեղծում:

Գ) Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում շարունակական և կայուն սոցիալական գործընկերության կայացման համար դրան անհրաժեշտ է ինստիտուցիոնալ տեսք տալ: Առանցքային կազմակերպություն կլինի ՄԿՈՒ Հանձնաժողովը (Խորհուրդը), որը կիմնադրվի որպես ՀՀ ՄԿՈՒ օրենքի կիրառման գործառույթներից մեկը (տես նաև սույն գլխի 5-րդ բաժինը): Այդ խորհուրդը կազմված կլինի գործատուների կազմակերպությունների (առևտրաարդյունաբերական պալատ, գործարաների միություն և այլն), արհմիությունների, շահագոգիո նախարարությունների հավասար թվով բարձրաստիճան ներկայացուցիչներից և կղեկավարվի ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից:

Խորհուրդը նիստեր կգումարի տարեկան առնվազն երկու անգամ՝ մեկ անգամ խորհրդարանական տարվա սկզբից առաջ քաղաքականության տարեկան պլանը քննարկելու նպատակով և մեկ անգամ դրա ընթացքում՝ քաղաքականության իրականացումը գնահատելու համար:

Դ) ՄԿՈՒ խորհրդի ստեղծումը պետք է ամրագրվի համապատասխան օրենքով: Խորհուրդը ՀՀ կառավարություն կարող է ներկայացնել նաև ընթացիկ առաջարկություններ:

Խորհրդի գործունեության սկզբնական աշխատանքները ոյուրինացնելու նպատակով՝ կկազմակերպվի նախնական հանդիպումներ խորհրդի ապագա անդամների միջև՝ ստորագրելու հուշագիր: Հուշագիրը կսահմանի պատասխանատվությունների և ռեսուրսների փոխադարձ օգտագործման սկզբունք: Հուշագրի տեքստի մշակման գործընթացին նպաստելու համար առաջարկվում է ձևավորել անկախ, սակայն բոլոր կողմերի հետ համաձայնեցված քարտուղարություն:

Ե) Հուշագրի ձևավորման գործընթացը կարող է սկսվել օրենքի ընդունումից առաջ կամ անգամ անկախ ձևով և ավարտվել վեց ամսվա ընթացքում: Խորհրդի

ստեղծումը կսկսվի օրենքի ընդունումից հետո և կավարտվի մեկ տարվա ընթացքում:

Զ) Խորհրդի երկարաժամկետ գործունեությունը կպահանջի մարդկային և ֆինանսական ռեսուրսները այն պետք է երաշխավորված լինի կառավարության և սոցիալական գործընկերների փոխադարձ համաձայնությամբ:

10. Թափանցիկություն և հավատարմագրում

Ա) «Հավատարմագրում» հասկացությունը Հայաստան է մուտք գործել 1989-90 թվականներին, երբ ավանդական պետական ուսումնական հաստատությունների կողքին ստեղծվեցին մի շարք այլընտրանքային ոչ պետական ուսումնական հաստատություններ: Վերջիններս կողմնորոշվելով դեպի սոցիալական մեծ պահանջարկ վայելող և հանրապետությունում նախկինում գոյություն չունեցող մասնագիտությունները, դիմորդների հավաքագրման գործում պետական ուսումնական հաստատությունների (հատկապես բուհական) լուրջ մրցակիցներ դարձան:

Այս պայմաններում, բնականաբար, անհրաժեշտություն առաջացավ ստեղծել կրթության կառավարման ճկուն համակարգ և ներդնել ուսումնական հաստատությունների գործունեության, կրթության բովանդակության և ուսուցման որակի վերահսկման առավել արդյունավետ մեխանիզմներ: Այդպիսին է հավատարմագրման համակարգը, որը՝ «Հավատարմագրում» հասկացությունը, իրավական հենք և օրենքի ուժ ստացավ միայն 1999 թվականին՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո:

Չնայած իրավական դաշտի և կազմակերպչական աշխատանքների բավարար հիմնավորվածության ուսումնական հաստատությունների պետական հավատարմագրման գործընթացը պահանջվող պատշաճ մակարդակով չիրականացվեց և այդ ճանապարհին տեղ գտան բազմաթիվ սխալներ ու բացքողումներ:

Պետական հավատարմագրման գործընթացում չի պահպանվել օրենքով նախատեսված պետական հավատարմագրման հիմնական պահանջը, որը պետական կրթական չափորոշիչներին համապատասխան ուսուցման որակի ապահովումն է: Գործընթացը չի ծառայել որպես ուսուցման որակի վերահսկման մշտական գործող համակարգ և չի նպաստել կրթության որակի բարձրացմանը: Հավատարմագրումն իրականացնողները, չունենալով համապատասխան նախընթաց փորձ, նաև չեն վերապատրաստվել այդ բնագավառում աշխատելու համար:

Բ) Անհրաժեշտ է արմատապես բարելավել հավատարմագրման համակարգն անբողջությամբ՝ խստորեն պահպանելով հետևյալ հիմնական սկզբունքները, նպատակները, խնդիրներն և գործառույթները:

Հավատարմագրման հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

- մասնագետների պատրաստման մակարդակի և ուսումնական հաստատության գործունեության արդյունավետության բարձրացումը,
- քաղաքացիների կարողություններին ու ցանկություններին համապատասխան կրթություն ստանալու իրավունքի ապահովումը,

- հավատարմագրված յուրաքանչյուր ուսումնական հաստատության (մասնագիտության) կրթության որակի երաշխավորումը,
- հասարակությանը զերծ պահել անորակ կրթությունից և ապահովել անձի իրավունքները պետական պահանջներով սահմանված ծավալի, բովանդակության և որակի կրթություն ստանալու համար: Հասարակությանը կրթության որակի վերաբերյալ իրական տեղեկատվությամբ ապահովումը,
- կրթական գործունեության պարբերաբար ինքնավերլուծության միջոցով ուսումնական հաստատության ինքնազարգացման և ինքնակատարելագործման դինամիկ գործընթացների խթանումը,
- պետության, հասարակության և մասնագետներ «սպառող» կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև միջազգային կրթական համակարգին ինտեգրվելու գործընթացում կրթական համակարգի համարժեքության և իրավունքների պաշտպանումը:

Հավատարմագրման հիմնական սկզբունքներն են լինելու.

- հավատարմագրող պետական մարմնի անկախությունը և ինքնավարությունը,
- հավատարմագրման պետական-հասարակական բնույթը,
- հավատարմագրման գործընթացի և որակի վերահսկման թափանցիկությունը, հրապարակայնության ապահովումը: Այդ գործընթացում բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցության և որակի վերահսկման ու ապահովման գործընթացների վերաբերյալ հաշվետվությունների հրապարակայնությունը,
- ուսումնական հաստատության գործունեության գնահատման օբյեկտիվության ապահովումը,
- կամավորությունը,
- հավատարմագրի գործողության ժամկետի սահմանափակությունը,
- որակի վերահսկման անընդհատությունը:

Գ) ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից սոցիալական գործընկերների միասնական պատասխանատվությամբ կիհմնադրվի **ՄԿՈՒ զարգացման ինստիտուտ (ՄԿՈՒԶԻ),** որը կզբաղվի նաև որակավորումների համակարգի մշակմամբ: ՄԿՈՒ զարգացման այդ հաստատությունը կապահովի նաև ՄԿՈՒ եռակողմ խորհրդի կազմը:

Հավատարմագրման բոլոր գործընթացների համար պատասխանատու մարմինն է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

Դ) Խնդրին առնչվող բոլոր հիմնական սկզբունքները կամրագրվեն օրենքով, իսկ մեխանիզմները, չափանիշներն ու պահանջները՝ ՀՀ կառավարության որոշումներով և ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամաններով:

Նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է մշակել որակի վերահսկման համար անհրաժեշտ է մշակել որակի վերահսկման ժամանակակից մեխանիզմներ, եղանակներ և կանոնակարգեր, միաժամանակ ուսումնասիրել հաստատություններում գործող նորմատիվներն ու մեթոդները, միջազգային փորձի տեսանկյունով տալ դրանց համեմատական վերլուծությունները՝ և պահանջել ուսումնական

հաստատությունների կողմից իրենց ֆունկցիոնալ (գործառնական) պարտավորությունների կատարումը՝ կրթության որակի ապահովման իմաստով:

Հավատարմագրման և կրթության որակի թափանցիկության ու հրապարակայնության ապահովման նպատակով անհրաժեշտ է զանգվածային լրատվական միջոցներով և մասնագիտական պարբերականներով յուրաքանչյուր տարի հասարակությանը իրազեկել հավատարմագրման չափանիշների, որակի վերահսկման ու գնահատման վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների արդյունքների մասին, իսկ հավատարմագրման չափանիշները սահմանելիս դրանք համաձայնեցնել բոլոր շահագրգիռ նախարարությունների, գերատեսչությունների, մարզերի, հասարակական կազմակերպությունների, ստեղծագործական և մասնագիտական ընկերակցությունների և միությունների հետ: Աշխատանքներում անհրաժեշտ է ընդգրկել ճանաչված առաջատար մասնագետներ:

Որպես հավատարմագրման որոշակի երաշխիք և, ըստ Էռլյան, դրա առաջին փուլ՝ պետք է դիտվի ուսումնական հաստատությունների լիցենզավորման (գործունեության թույլտվության) գործընթացը, որի արդյունքների մասին նույնականացնելու հասարակությանը:

Ե) Հավատարմագրման նոր համակարգը կարող է ներդրվել օրենքի և համապատասխան ենթաօրենսդրական ակտերի ընդունումից հետո՝ 2005-2006 ուսումնական տարվանից:

Զ) Որոշակի ֆինանսական միջոցներ կպահանջվեն լիցենզավորման և հավատարմագրման ծառայության (գործակալության) աշխատակազմի վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու համար:

Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ինստիտուտի հիմնադրման և ֆինանսավորման հարցերը կքննարկվեն սոցիալական գործընկերների հետ: Հնարավոր է պահանջվեն որոշակի բյուջետային ներդրումներ:

11. Ինտեգրում կրթության բնագավառում միջազգային զարգացուներին

Ա) Տարբեր երկրների կրթական համակարգերը ունեն որոշակի տարբերություններ և յուրահատուկ առանձնահատկություններ: Այդ տարբերությունները բխում են յուրաքանչյուր երկրի պետական և կրթական քաղաքականությունից, զարգացածության աստիճանից, ազգային և մշակութային առանձնահատկություններից, տնտեսական զարգացածությունից և բազմաթիվ այլ գործուներից: Դրանք իրենց հերթին բերում են կրթության տևողության (ժամանակամիջոցի), որակի, բովանդակության, կրթական համակարգի կառուցվածքի, կրթական տարբեր աստիճաններին ներկայացվող պահանջների ու պայմանների բազմազանությանը, գնահատման չափանիշների, կրթական չափորոշչների, մեթոդների խայտաբղետությանը՝ հանգեցնելով նրանց համեմատելիության և համարժեքության որոշման կանոնակարգման ու միասնական մեթոդաբանության անհրաժեշտությանը:

Ուսումնական հաստատությունների կողմից շնորհվող կրթության մասին վկայականների (դիպլոմների, ատեսատների), գիտական աստիճանների ու

կոչումների միջազգային ճանաչման և համարժեքության հարցերը, դրանց համեմատելիության և համապատասխանելիության խնդիրը առավել կարևորվում է ներկա պայմաններում, քանզի ինչպես միջազգային (համաշխարհային), այնպես էլ տարածաշրջանային սահմաններում կրթության համարժեքության խնդիրի լուծումը վճռական ազդեցություն կունենա սովորողների, դասախոսների, մասնագետների ակտիվ շարժունակության վրա, կատեղծի հավասար պայմաններ ու հնարավորություններ ինչպես կրթություն ստանալու, այնպես էլ մասնագիտական գործունեություն ծավալելու համար, կօգնի նվազեցնել մարդկային խտրականությունը համաշխարհային աշխատանքի շուկայում և կրթական տարածքներում: Մարդկության համար այդ խնդիրի լուծումը ակտուալ կլինի նաև XXI-րդ դարում, սակայն միջազգային ինտեգրացման, կրթության տարբեր մակարդակների ավարտական վկայականների փոխադարձ ճանաչելիության հարցը և դրանց համարժեքության որոշումը մնում է բոլոր երկրների կողմից էլ չլուծված և կրթության բնագավառի հիմնական խնդիրներից մեկը:

Բ) Ըստ Լիսաբոնյան Կոնվենցիայի, որը թեև վերաբերում է բարձրագույն կրթության խնդիրներին, սակայն մի շարք հարցերում կարող է հավասարապես կիրառելի լինել նաև միջին և նախնական մասնագիտական կրթության համար, յուրաքանչյուր մասնակից-երկիր պետք է ստեղծի «Կրթության տեղեկատվական կենտրոն», որի հիմնական խնդիրներն են լինելու՝

- հիմնավոր, ճշգրիտ և թարմ տեղեկատվություն ներկայացնել կրթական համակարգի և նրա որակավորումների վերաբերյալ,
- դյուրինացնել մյուս կողմի կրթական համակարգերի ու որակավորումների վերաբերյալ տեղեկատվության մուտքերը,
- հանրապետության օրենքների ու կանոնակարգերի համապատասխան ապահովել խորհրդատվություններ, փորձաքննություններ և տեղեկատվություն (սերտիֆիկատների շնորհումով) որակավորումների ճանաչման ու գնահատման վերաբերյալ :

Միջազգային կրթական տարածք ինտեգրման և կրթության համարժեքության ապահովման ՀՀ ռազմավարությունը բոլորովին չի նշանակում, թե նոր կամ համընդհանուր կրթական համակարգ է ներդրվում, պարտադիր պահանջ չեն նաև միջազգային ստանդարտները: Յուրաքանչյուր երկրի տեղական առանձնահատկությունների ու սոցիալ-տնտեսական պայմանների փոխներգործությունը բերում է կրթության այնպիսի համակարգի, որը շատ հատկանիշներով ընդունելի է հենց այդ երկրի համար: Ցանկացած փորձի պարտադրում մեկ այլ երկրում անարդյունավետ է և չարդարացված:

Կրթության միջազգային ինտեգրացումը պետք է նախատեսի Յայաստանի կրթական համակարգի թափանցիկություն, կառավարման հստակեցում, հիմնական սահմանումների, վարկանիշային հիմնական և լրացուցիչ չափանիշների համապատասխանեցում և համեմատելիություն: Դրանք են՝ ընդունելությունը, տարիքը, աշխատակազմի և շրջանավարտի որակավորումները, ուսման համալիր (գումարային) տևողությունը, ազգային կրթական աստիճանները և դասակարգման կառուցվածքը, ծրագրի տեսակն ու

բովանդակությունը, որակի գնահատման համակարգերը, հաջորդ կրթության տեսակը, մասնագիտական աշխատանքի բնագավառը:

Այժմ պետք է պատասխանել մեկ հարցի. պատրա՞ստ է արդյոք Հայաստանի միջին մասնագիտական կրթության համակարգը միջազգայինուն ընդգրկվելու: Մեր կարծիքով, անցումային դժվարությունները մեծ չեն, կարելի է ապահովել սահուն, առանց ցնցումների անցում:

Գ) Հայաստանի նախնական ու միջին մասնագիտական կրթության համակարգի միջազգային ինտեգրման խնդրի պատասխանատու մարմիններն են լինելու ՀՀ կրթության և գիտության և ՀՀ արտաքին գործերի նախարարությունները:

Եվրոպական կրթական Հիմնադրամի Հայաստանի ազգային դիտակետը կապահովի ինտեգրացման տեղեկատվական հենքը՝ միջազգային զարգացումներին իրազեկելու տեսանկյունով:

Դ) «Նախնական և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում անհրաժեշտ է հստակ դրույթներ ամրագրել ՀՀ ՄԿՈՒ համակարգի միջազգայնացման մասին՝ հոչակելով պետության դիրքորոշումն այդ խնդրի վերաբերյալ:

Ե) Միջազգային ինտեգրումը տևական և գրեթե անընդհատ գործընթաց է, սակայն դրա իրականացումը կարող է սկսվել համապատասխան դրույթներ պարունակող օրենքի ընդունումից անմիջապես հետո: Այն կիրականացվի փուլերով՝ ՀՀ ՄԿՈՒ համակարգի՝ տվյալ խնդրին պատրաստվածության աստիճանին համապատասխան:

Զ) Ֆինանսկան լրացուցիչ միջոցներ կպահանջվեն միայն արտասահմանյան պետությունների ՄԿՈՒ համակարգերին ծանոթանալու նպատակով՝ ՀՀ ՄԿՈՒ դեկավարների և կառավարիչների ուսուցողական այցերի կազմակերպման համար:

12. Ուսուցում ողջ կյանքի ընթացքում

Ա) Ուսուցումը ողջ կյանքի ընթացքում գործընթաց է, որն իրականացվում է կրթական և ոչ կրթական հաստատությունների մջոցով, որի ընթացքում օգտագործվում է որոշակի կրթական և արտադրական ուսուցման ծրագրեր և նպատակ ունի հիմնարար կրթության արդյունքում ձեռք բերած գիտելիքները և հնտությունները վերարտադրել, արդիականացնել, զարգացնել ու արդյունավետ օգտագործել՝ կախված տվյալ ժամանակաշրջանի պահանջարկներից և պայմաններից:

Մի կողմից, մասնագիտական կրթության և ուսուցման որևէ համակարգ այլևս չի կարող ուսանողներին տալ այնպիսի կրթություն, որը կապահովի աշխատանքի կամ եկամտի հեռանկարներ ողջ կյանքի համար, սակայն մյուս կողմից, շարունակական և երբեք չդադարող ուսումնական գործընթացը բերում է մարդկային ռեսուրսների նորացման և ողջ կյանքի ընթացքում ուսուցման բովանդակության աղապտացիայի, որը որպես ընդհանուր գաղափար՝ կարող է կազմել մասնագիտական կրթության, սկզբնական ու շարունակական մասնագիտական ուսուցման ենթահամակարգ:

